Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՎԱՉԻԿ ԴԱՎԹՅԱՆ

Խաղաղություն բերողը



Խաղաղություն բերողը

Ինձ թվում է, որ եթե ես ապրեի ոչ Արցախում, ապա կգրեի արտասահմանյան ռոք-համերգների, ցուցահանդեսների, գուցե թե անչափահասների կեղտոտ սովորությունների և կամ չափահասների սովորական կեղտոտությունների մասին, բայց քանի որ նշեցի, թե որտեղ եմ ապրում, ապա կգրեմ միայն հայրենիքիս առօրյայի մաս կազմող մանրուք թվացող մեծությունների մասին:

Անունս Ավո է: Հայրս անունս դրել է ի պատիվ Մոնթե Մելքոնյանի: Իմ տարիքակիցների մոտ շատ են հանդիպում Ավո և Մոնթե անունները: Այն մեր ծնողների մեծ հարգանքն է հերոսի նկատմամբ և հույսը,

որ իրենց զավակը ինչ-որ ձևով կնմանվի Ավոյին:

***

...Ինչպես մնացած առավոտներն, այս առավոտ ևս որոշել էի արթնանալ ժամը հինգին և վազել, սակայն, ինչպես միշտ, արթնացա՝ զբաղվեցի զարթուցիչս անջատելով ու քնելով (ասեմ, որ երկրորդ զբաղմունքս տևեց երևի վայրկյաններ): Արդեն ժամը յոթն անց տասնհինգ էր, երբ զարթնեցի ահեղ ձայնից: Ինձ թվաց, թե ինչ-որ հսկա բան երկնքից ընկավ գետնին, բայց սթափվելով՝ հասկացա, որ առօրյաս է՝ կրակոցներ մի քանի կիլոմետր հեռու դիր-քերից: Վեր կացա տեղիցս: Չխախտելով գրաֆիկս՝ միացրի համակարգիչս, որպեսզի տեսնեմ, թե ինչ է փոխվել իմ քնելու ընթաց-քում: Ամեն ինչ նույնն էր՝«հրատապ լու-

ներ», «տարածե՛ք, քանի չեն ջնջել»-ներ:

Լվացվեցի, սովորություն դարձած մեկ բաժակ սուրճով ողողեցի դատարկ ստամոքսս և բռնեցի աշխատավայրիս ճամփան: Շատ կարճ է տուն-աշխատավայր ճանապարհս, հաշվել եմ, ընդամենը 12 րոպե 37 վայրկյան (եթե մեքենայով եմ): Կա նաև մի քիչ ավելի երկար ճանապարհը, բայց այս մի ճանապարհով, ամեն կիլոմետրը 1 րոպե 15 վայրկյանում անցնելով, ճիշտ ժամանակին հասնում եմ աշխատանքիս:

Ինչպես մեծամասնությունը, ես էլ եմ ավարտել բուհը: Եվ նորից, ինչպես մեծամասնությունը՝ չսիրելով իմ մասնագիտությունը: Մասնագիտությամբ կենսաբան եմ, բայց հողաթափիկ ինֆուզորիայից, դեզօքսիռիբոնուկլեինաթթուից (ԴՆԹ) և նմանատիպ մի քանի բառերից բացի չորս տարվա

ընթացքում ոչինչ չեմ սովորել, իսկ սովորածներս էլ ոչ թե դրանց կենսաբանական դերն ուսումնասիրելն էր, այլ զուտ այդ բառերի արտասանությունը մտապահելը: Բայց ես այն համարում եմ իմ երկրորդ մասնագիտությունը, քանի որ իմ հիմնական և առաջնային մասնագիտությունը Հայրենիքի պաշտպան լինելն է, որի համար միասնական քննություններ չեմ տվել, չորս տարի անընդհատ քննաշրջանից քննաշրջան չեմ հաճախել համալսարան և միայն քննության օրերին ծանոթացել դասախոսներիս հետ, մի կերպ չեմ վաստակել իմ «գնացքի տակ ընկած» 3(երեք բավ.) միավորը(իդեպ, միշտ այդ «բավ. » գրածը ոչ թե համարում էի բավարար, այլ՝բավական): Հիմնական մասնագիտությանս համար միայն Արցախում ծնվելս ինքնին և՛

ընդունելության քննություն է, և՛ ցանկացած կարմիր դիպլոմ:

Հետախույզ եմ: Ընտանիքիս միակ զավակն եմ և հենց դա է պատճառը, որ մայրս ծանր է տանում շաբաթներով տնից բացակայելս, ինչպես նաև օրերով տուն չզանգելս: Բայց ինչ արած, համակերպվել են, որ իրենց որդին օրվա ցանկացած ժամի կարող է տուն գալ և նույն ցանկացած ժամի էլ գնալ աշխատանքի: Ամեն անգամ տնից դուրս գալիս պարտադիր էր այս երկխոսությունը.

-Մա՛մ, գնացի:

-Հաջո՛ղ ու թող հաջորդ անգամ խաղաղություն բերես հետդ:

-Անպայման:

Մինչև հիմա էլ փնտրում եմ այդ խաղաղությունը, ա՜խր մորս եմ խոստացել: Հուսով եմ՝մի օր այդ էլ կտեսնենք: Ճիշտ է, կարող է ոչ մեր աչքերով, բայց Մեր աչքերով՝Հայի աչքերով:

Ընտանիքից բացի կա նաև մեկ այլ կարևոր նախապայման, որն ինձ ձգում է դեպի տուն.Մանեն է... Ի՜նչ էլ իմացել են նրա ծնողները, որ աղջկական անուններից ամենաշատը սիրում եմ Մանեն: Ես և Մանեն հարևաններ ենք, միասին ենք մեծացել, միասին հարևանի խակ ծիրան-ները կերել, միասին հեծանիվից ընկել: Իմ և նրա աջ ծնկի վրա կա նույն սպին՝ հավերժության նշանի նման: Իրար խոս-տացանք, որ հավերժ ընկերներ կմնանք, բայց մեր խոստումը չպահեցինք: Մեր ընկերությունը վերաճեց սիրո: Բայց սպին մնաց, հավերժության սպին:

Կիրակի օր էր: Դեռևս հաջորդ կիրակի օրն էինք որոշել, որ ամբողջ օրը միասին պետք է անցկացնենք, բայց նախորդ կիրակի չստացվեց. այդ ամբողջ օրը անց էի կացրել զինվորներիս հետ: Այս կիրակի մի կերպ գործերս դասավորեցի: Ճիշտ է, սխալ էի արել, բայց նաև հեռախոսս անջատեցի, որ օրս «չփչացնեն»: Դե, քանի որ կապի միջոց չունեի, և պետք էլ չէր Մանեին իմաց տալու համար. երեք անգամ հազալս բավական էր, որ նա մեկ րոպեից կողքիս կանգնած լիներ:

-Ուշացար:

-Ախր երրորդ հազոցդ փոք-ինչ ցածր էր, իսկ երկուս ու կես անգամը, եթե չես մոռացել, նշանակում է՝մեկ րոպեից դուրս արի:

-Փաստորեն, հազելուս տոնայնությունը նոտայից ընկել է, լավ երաժիշտ գիտեմ, կտանեմ մոտը՝ լարի:

-Կասես նաև մի քիչ յուղ քսի, ոնց որ թե ժանգոտվել է: Այնքան չես օգտագործել՝ դարձել է թանգարանի եզակի նմուշ:

-Քնքու՛շս, ախր ինչու՞ ես նեղանում, չգիտե՞ս աշխատանքիս բնույթը: Առաջին իսկ հնարավորության դեպքում գալիս եմ տուն: Դեռևս նեղացա՞ծ ես:

-Չէ, ամեն ինչ լավ է…կարգին է…այո՛, նեղացած եմ, բայց ոչ քեզնից:

-Ապա ումի՞ց:

-Թուրքից:

-Քո հաճելի ներկայությանը տհաճ արտահայտություններ մի՛ խառնիր: Մի օր լավ կլինի, ես կգամ՝ խաղաղությունը հետս:

-Գիտե՞ս՝այդ օրվան բոլորից շատ ես եմ սպասում, քո բերած խաղաղությունը ինձ օդ ու ջրի նման պետք է, իմ խաղաղությունը դու ես բերելու, հաստատ: Էլ ո՞վ, եթե ոչ դու, դու Ավոն ես, մի՛ մոռացիր, իսկ Ավոնները չեն պարտվում ոչ մի հարցում:

Համարյա ամբողջ օրը քայլեցինք զրուցելով: Ինչքան զրուցում, այնքան նորովի էինք իրար բացահայտում: Օրինակ, նա իր համար բացահայտեց, որ ուտելիքներից երբեք չեմ ուտում ոչխարի միսը, բորշը և վարունգը: Ճիշտ է, վարունգ չուտելուցս մի քիչ զարմացավ, դե ես էլ այդպիսի մարդ եմ: Նա նույնպես չի սիրում ոչխարի միս, իսկ

բորշն ու վարունգը շատ է սիրում: Փաստո-
րեն, կամ ես պետք է վերանայեմ ճաշա-
ցանկս, կամ նա, բայց երևի նա կվերանայի:

-Ավո՛, իսկ գիտե՞ս, որ երբ քեզ կարոտում եմ, թուղթն ու գրիչը ձեռքս եմ վերցնում և տողեր խզբզում: Մի օր ցույց կտամ սնագրություններիս հավաքածուն:

-Ի՜նչ լավ է, ինչպիսի զուգադիպություն: Ես էլ չեմ անտարբեր գրելու նկատմամբ, անգամ մի քանիսը տեղադրել եմ իմ էջում:

-Գիտեմ, տեսել եմ, - նրա ձայնի մեջ տխրություն զգացի:

-Ինչու՞ այդպես, դուրդ չե՞ն եկել, անմիջապես կջնջեմ:

-Չէ, ի՞նչ ջնջել, շատ եմ հավանել, բայց….

-Բայց ի՞նչ:

-Բայց ինչու՞ ձեր դասարանի Տաթևիկը մեկնաբանություն է գրել և հարցրել, թե ում է նվիրված բանաստեղծությունը: Ինչու՞ բոլորին բարձրաձայն չես ասում, չես գոռում, որ այն իմ մասին է, թե՞…

-Վատ չէ, փոքրիկ Մանեն արդեն խանդում է: Իհարկե, քո ու միայն քո մասին է: Բոլորն էլ շուտով կիմանան: Եվ եթե բանը հասավ դրան, ապա ասեմ՝ մոտ ժամանակներս ուզում եմ՝ նշանվենք:

-Դու երևի կատակում ես:

-Նման հարցերը կատակ չեն սիրում:

-Ուրեմն վազեցի տուն, տեղյակ պահեմ մերոնց: Վաղը չենք կարող հանդիպել, նշանդրեքիս եմ պատրաստվում: Հա՛, ու երևի քեզ էլ հրավիրեմ:

Մտա տուն: Մայրս, սեղանը գցել, ինձ էր սպասում: Հրաշալի օրվա ինչպիսի հրաշալի ավարտ: Մսով և սնկով աղցան էր պատրաստված, իսկ ես Մանեի նյարդերը ուտելուց հետո ամենաշատն այդ աղցանն եմ սիրում ուտել: Արագ-արագ կերա աղցանը և մի բաժակ գինի կոնծեցի: Ընթրիքս ոչ մի բանով չէր զիջում ֆրանսիական ռեստորանների շքեղ ընթրիքներին, ասեմ ավելին, այն գերազանցում էր, քանի որ մորս պատրաստածը չեմ փոխի և ոչ մի հայտնի խոհարարի պատրաստածի հետ: Ուտելուց հետո սխալս ուղղեցի, որն ամբողջ օրը մտքումս էր: Միացնելով հեռախոսս՝ տեսա հետևյալ պատկերը՝ չպատասխանած զան-

գեր՝ քառասունչորս, որից միայն երեսունը մորս համարն էր. երևի մատը միամիտ էր դիպչել, բայց չէ, տարբեր ժամերի մատը միամիտ չի դիպչի հեռախոսին՝ հանելով այն արգելափակումից և այնքան համարնե-րի մեջ զանգելով կոնկրետ իմ համարին: Իսկ մնացած մյուս զանգերը ընկերներիցս էին: Նոր հիշեցի, որ մի քանի կիրակի է, խաբել եմ, որ այս կիրակի կհավաքվենք: Փաստորեն, այս կիրակի էլ խաբեցի, ոչինչ, հաջորդ կիրակիս էլ նրանց կնվիրեմ սրտանց:

Գիշերն այնպես քնեցի, որ զարթնե-լուց թվաց, թե ամպերից եմ իջնում, ինչ-պիսի՜ թեթևություն: Երազումս երազն ու իրականությունը խառնվել էին իրար: Այն, ինչ ինձ համար համարում էի երազանք, կարծես իրականացել էր: Վերջապես բերել էի մորս խոստացված խաղաղությունը:

Մանեիս հետ ամուսնացել էի և ուտում էի բորշ և հետն էլ՝ կծում վարունգից: Չեմ ուզում հավատալ դրան, բայց, ինչպես երևում է, ես եմ ճաշացանկ վերանայողը լինելու:

Այս առավոտ որոշեցի բացառություն անել. վազեցի տան շուրջը երկու շըրջան, այնուհետև լավ նախաճաշեցի: Այս պահից սկսած ես ինձ լրիվ առույգ եմ զգում և լիովին պատրաստ եմ ծառայությանս: Նախորդ օրվա սխալս ուղղելու համար կգնամ և իմ կամքով այդ օրը պատասխանատու կմնամ գումարտակում:

-Ու՞ր ես, այ՛ տղա, մեռանք զանգելով, -վրա տվեց ընկերս:

-Կարևոր գործ ունեի, հեռախոսս էլ փչացել էր:

-Կարևոր գործդ Մանեի հետ հանդի-պելն էր, հեռախոսիդ էլ բան չի եղել, մենք էլ ենք սիրահարվել, քո անցած ճանապարհը անգիր գիտենք:

-Ճի՛շտ ես, հասկանում ես ինձ նաև առանց բացատրությունների:

-Ընկեր ենք չէ՞:

-Ընկեր ենք և մի քիչ էլ ավելին, դու իմ փրկիչն ես:

-Ավո՛, ինչքա՞ն ասեմ, մոռացի՛ր դրա մասին: Ես պարտավոր էի դա անել, չանելն իմ կողմից կդառնար դավա-ճանություն:

-Ախր հնարավոր էր չէ՞, որ իմ կյանքը փրկելով՝ կորցնեիր սեփականդ:

-Չեմ հերքի, բայց մի տոկոս անգամ չեմ փոշմանում արածիս համար:

Աշոտի հետ ընկերացել էինք համալսարանում: Նա էլ ինձ պես ավանդույթի համաձայն էր ընդունվել, նույն ավանդույթի համաձայն էլ դիպլոմ էինք ստացել: Բայց նա ևս չընտրեց իր երկրորդական մասնագիտական ուղին: Այդ հարցում նորից նման ձևով վարվեցինք: Ես ու Աշոտն ավելի մտերմացանք զորամասում: Քանի որ մենք ֆիզիկապես կոփված էինք, մեզ ուղարկեցին հետախուզական դասընթացների: Դասընթացը հեշտ հաղթահարեցինք և վերադարձանք զորամաս որպես հետախույզ սպաներ:

Մեր առաջին հետախուզական փորձը հաջողությամբ պսակվեց: Ինչը երկրորդ անգամվա մասին չեմ կարող ասել:

Աշխատանքից հետո միասին տուն էինք վերադառնում: Դեռևս տուն չէինք հասել, երբ զանգ եկավ, որից հետո անհապաղ պետք է վերադառնայինք զորամաս: Նույն գիշերը երկուսս էլ մարտական առաջադրանք պետք է կատարեինք: Առանց երկմտելու համաձայնեցինք, բայց միշտ էլ դեմ եմ եղել նրա հետ նույն վտանգավոր վայրում գտնվելուն, որովհետև եթե մի բան պատահեր, գոնե մեզնից մեկը տուժեր: Բայց, քանի որ հրամանները չեն քննարկվում, անցանք այն կատարելուն: Ականապատ դաշտն արդեն հաղթահարել էինք, երբ թշնամին մեզ նկատել և կրակ էր բացել մեր ուղղությամբ: Ժամանակին չհասցրի թաքնվել և ոտքիցս վիրավորվեցի: Մնացածները, չնկատելով դա, սողեսող հետ էին վերադառնում: Մի քանի րոպե անց կողքիս ձայներ լսեցի: Աշոտը մոտս էր.եկել էր

հետևիցս՝ ինձ փրկելու: Մի կերպ քարշ տալով՝ անվտանգ տեղ հասցրեց, սակայն լռությանը հետևեց միայն մեկ կրակոց: Ընկերոջս մարմինն ընկավ ուղիղ ինձ վրա: Այդ պահին սիրտս այնքան արագ էր խփում, որ չէի կարողանում որոշել՝ արդյոք նրա զարկերակը խփո՞ւմ է, թե՞ոչ: Անմիջապես դիրքի անձնակազմը առաջին բուժօգնություն ցուցաբերեց, որից հետո պատգարակով տեղափոխեցին արդեն օգնության եկած ավտոմեքենայի մեջ: Բարեբախտաբար իմ և նրա կյանքը հաջողվեց փրկել: Մի քանի ամսից ես լրիվ ապաքինվել էի, իսկ նա հավերժ մնաց հաշմանդամ: Կրակոցից վնասվել էին կենսական կարևոր օրգաններ, սակայն բախտը ժպտաց թե՛ ինձ, թե՛ նրան: Նրան, որովհետև կարողացավ հակահարված տալ մահվան, ինձ, որովհետև չկորցրի նրան: Սակայն ո՛չ

Աշոտն էր ուզում դուրս գալ աշխատանքից, և ո՛չ էլ նախարարությունից էին ստորագրում նրա՝ աշխատանքից ազատելու թերթիկը: Ուստի ընկերս մնաց որպես սպա: Նրան չէին թույլատրում հետախուզական գործողություններին մասնակցել, չնայած միշտ էլ պատրաստ էր ամենաթեժ վայրերում գտնվելու: Փաստորեն, նա փրկեց կյանքս: Աշոտն իմ փրկիչն է: Հենց դրա համար էլ նա ինձ համար ընկերից էլ առավել է:

Ճշտեցի, որ այսօր նա է պատասխանատուն, և պատրաստ եմ իր փոխարեն մնալ: Անձամբ կկարգավորեմ այդ հարցերը:

Հրամանատարին տեղյակ պահեցի և այսօր որպես պատասխանատու կմնամ զումարտակում: Որոշեցի, որ օրս նվիրեմ զինվորների հետ զրուցելուն, գիտեմ, որ

վստահում են ինձ, որոշները՝ նաև կիսվում հետս: Մոտեցա անկյունում նստած զինվորին, որը հեռուն էր նայում:

-Ի՞նչ է եղել, մտահոգված ես երևում:

-Կարոտել եմ, պարո՛ն կապիտան, նրանց եմ սպասում, ճանապարհին են ծնողներս ու սիրած աղջիկս:

-Դե կգան, էլ մի՛...

-Ախր ուշանում են, իմ հաշվարկներով այս ժամին այստեղ պիտի լինեին: Ուշանում են, պարո՛ն կապիտան: Երևի չեն էլ գա:

-Իսկ եթե ասեմ, որ ձերոնք շտաբում են և քո արձակման թերթիկն են ձևակերպում...

-Հույս եք տալիս, որ սպասե՞մ, բայց չեմ հավատում:

-Սերժա՛նտ Սարգսյան, -լսվեց օրապահի ձայնը, - շտաբից քեզ են կանչում:

Մինչ կհասցնեի ասել, որ ճիշտ եմ, նա արդեն ցնդել էր աչքիցս: Կարոտը այդպիսի հետաքրքիր զգացմունք է: Կարոտի օբյեկտը մոտակայքում լինելու դեպքում սուբյեկտը ձգում է առ այն, քանի որ երկու կարոտ՝դրական և բացասական լիցքերով զրոյանում են: Ծանոթ իրավիճակ է: Թվում է, թե ամիսներով չեմ տեսել Մանեին: Երևի ժամանակը հաշվում են երկու եղանակով՝ սովորական ժամանակ և «կարոտի» ժամանակ: Երկրորդը առաջինից շա՛տ ու շատ անգամ դանդաղ է ընթանում:

Մտա լսարան, որպեսզի տեսնեմ, թե ինչ է կատարվում: Քար լռություն էր, բոլորը

կլանված հայրենասիրական ֆիլմ էին դի-տում, ասես այդ ֆիլմից ավելի վարակվում հայրենասիրությամբ, դառնում ավելի ըմբոստ՝ պատրաստ ամեն հրամանի: Զին-վորներից մեկը, նկատելով ինձ, ուզում էր «ոտքի» հրաման տալ, անջատել հեռուստա-ցույցը, արթնացնել սեղանի վրա հենված քնածներին, սակայն նրան հասկացրի, որ պետք չէ: Ես էլ լուռ նրանց մոտ նստեցի և սկսեցի ուշադիր նայել ֆիլմը՝ մեկ-մեկ զննելով նրանցից յուրաքանչյուրի դեմքը: Նրանց էմոցիաներից հասկացա, որ մեկը շուտ բռնկվող է, քանի որ կռիվ էր տալիս գլխավոր դերասանի հետ, մեկ այլ զինվոր եղունգներն էր կրծում, դա էլ հուշում էր նրա նյարդային լինելը, մի քանիսը ենթա-դրում էին հետագա զարգացումները, և միայն մեկն էր, որ նախկինում նայել էր այդ ֆիլմը և, չդիմանալով՝ դրվագ-դրվագ պատ-

մում էր ֆիլմի ողջ սցենարը. երևի նա էլ տաքարյուններից է: Եվ այսպես, մտքումս բոլորին բնութագրելով՝ ևս մեկ անգամ համոզվեցի, որ այս սերունդը ուրիշ է, վստահ եմ՝ նրանց մասին շատ կխոսվի: Ֆիլմն ավարտվեց: Մի քանի րոպե տևեց, մինչև հասկացան, որ ես լսարանում եմ: Նորից տիրեց նախկին լռությունը:

-Պարո՛ն կապիտան, գիտենք, որ դուք Ավոն եք: Պատմե՛ք նրա մասին,- ոգևորության եռանդը տարածվեց լսարանով մեկ: Դեռ չէի որոշել, թե որտեղից պետք է սկսեմ, երբ զինվորներից մեկը կանգնեց.

-Մոնթե Մելքոնյան, նույն ինքը՝ Ավո: Ծնվել է 1957 թվականի նոյեմբերի 25-ին ԱՄՆ-ում, Մեծ Եղեռնից փրկված և ԱՄՆ Կալիֆոռնիայի Վիսեյլիա քաղաքում հանգրվանած հայի ընտանիքում:

Մեր «Մոզգ»-ն էր: Համարյա ամբողջությամբ ներկայացրեց Ավոյի կենսագրականը: Ինչպես փոքրիկ երեխան է ուրախանում շոկոլադ տեսնելիս, հենց այդ նույն կերպ էլ ես էի ուրախացել, երբ որ լսեցի, թե ինչպես էր պատմում Ավոյի կյանքի պատմությունը: Այդ խելացի զինվորի ակնարկից հետո ցանկացան լսել նաև իմ անձնական պատմությունը, Ավոյի մասին պատմություններ, որոնց չես հանդիպի գրքերում և համացանցում:

-Ես, ինչպես գիտեք, Ավոն եմ: Կենսաբան եմ, արդեն վեց տարի է, ինչ աշխատում եմ զորամասում: Աշխատանքս շատ եմ սիրում, երևի նաև նրանից է, որ արյանս մեջ «ներարկված» են հայրենիքի պաշտպանության հորմոններ. պապս և հայրս ժամանակին նույնպես աշխատել են բանակում: Հայրենիքիս հանդեպ նվիրվածութ-

յունս գալիս է նաև անունիցս: Կրում եմ մի անուն, որը պատիվ է ինձ համար: Ավոն մարդ է, ում մասին այստեղ երբեք անցյալով չեն խոսում: Մարդը ներկա է, քանի նրան հիշում են, իսկ Ավոն միշտ էլ ներկա կլինի:

Կուզեի նախ ասել, որ Ավոն Արցախի հետ կապող ոչինչ չուներ: Նա այստեղ ո՛չ բարեկամներ ուներ, ո՛չ ծանոթներ: Եկել էր արյան կանչով: Մոնթեի նման հայրենասերները երևի ծնվում են հարյուր տարին մեկ կամ ավելի ուշ: Չէր սիրում իր մասին գովեստի խոսքեր լսել: Մի առիթով ասել էր. «Իմ կենացը մի՛ խմեք, իմ գործը շարունակե՛ք»: Պարզ էր Ավոն ու շատ սովորական, սակայն ինչ վերաբերում էր ռազմական գույքին, դառնում էր առավել խիստ, քան կարող եք պատկերացնել: Մի անգամ ռազմաճակատից գալուց հետո տեսավ, որ

պառավ մի կին ավտոյից բենզին էր լցնում շշի մեջ: Մոտեցավ և հարցրեց.

-Մայրի՛կ ջան, ի՞նչ կընես:

-Բալա՛ ջան, մի շիշ բենզին տանեմ, քանի Ավոն չի տեսնում:

-Տա՛ր, տա՛ր, բայց էլ չէնէ՛ս: Հաջորդ անգամը Ավոյին կըսեմ:

Աղջկա անուններից Ավոն սիրում էր Սիրա անունը: Հենց այդ պատճառով էլ նրա մարտական ընկերոջ դստերը անվանակոչեցին Սիրա: Ավելացնեմ նաև, որ Սիրան իմ դասընկերուհին էր՝ ոչ պակաս հայրենասեր, քան իր հայրն ու Ավոն:

Առաջին անգամ, երբ Ավոն մեր տուն էր եկել, զենքով էր մտել բաղնիք: Երևի չէր վստահում: Վստահություն ձեռք բերեցինք

աստիճանաբար: Երբ տատս լվացել էր նրա շորերը և կարկատել, Ավոն չէր ճանաչել իր սեփական հագուստը, պահանջել էր հինը, քանի որ մտածում էր, որ այն գնել ենք, չէր ուզում, որ նոր հագուստ գնելու վրա փող ծախսեինք: Մի կերպ համոզեցինք նրան, որ իր հին հագուստն է: Շատ էր սիրում դոշաբն ու մածունը: Բոլորը գիտեին դրա մասին և ամեն տան մի անկյունում պահված էր Ավոյի բաժին դոշաբը: Շատ ու շատ կարելի է պատմել Մոնթե(Ավո) Մելքոնյանի մասին, բայց ուշ է, պատրաստվե՛ք գիշերային ստուգատեսի:

-Պարո՛ն կապիտան, դուք ձեր անվանն արժանի անձնավորություն եք,- լսվեց լացակումած մի ձայն:

Դա պատասխանատու գնահատական էր, որն աչքերս լցրեց: Դա այն

գերազանց գնահատականն է, որի համար ոչ մի ծանոթ չեմ խառնել, ոչ մի համալ-սարանով չեմ անցել: «Բավ.» չէր, «գեր.» էր՝ գերազանց, գերպատասխանատու:

Երեկոյան անվանականչից հետո տղանե-րին «քուն» հրաման տրվեց: Տասն-հինգ րոպե անց շրջեցի գումարտակով, որպեսզի հաստատ իմանամ, որ բոլորը պառկած են, որից հետո մտա սենյակս և հանեցի սնագրություններս: Ամեն մեկը մի քանի անգամ ընթերցելուց հետո մաքրա-գրում էի և այն դարձնում գրքիս անբաժա-նելի մի մաս, մի էջ: Մանեն մի անգամ նկատել էր գրպանիս մեջ թղթեր՝ ճմռթված, քրքրված: Երբ հարցրել էր, թե ինչ թղթեր են, չկարողացա գաղտնի պահել, անկեղծացա և ասացի, որ գիրք եմ գրում, որ նա իմ գրքի հերոսուհին է, սակայն դեռևս վերնագրի հարցում չեմ կողմնորոշվել: Այդքանը: Ավել

բան չասացի: Հրատարակած վիճակում առաջին գիրքս իմ ստորագրությամբ կնվիրեմ նրան: Մի տեսակ լավ զգացի՝ «իմ ստորագրությամբ...»: Երազանք է, որը մի օր կիրականանա:

Առավոտյան մտնում եմ հրամանատարի մոտ և տեղեկացնում, որ ինձ անհրաժեշտ է տասնօրյա արձակուրդ: Հրամանատարս խիստ անձնավորություն է, բայց ինչ վերաբերում է ընտանիք կազմելուն, դառնում է մի բարի էակ: Ուրախությամբ և մի տեսակ էլ շտապելով լրացրեց արձակուրդիս թերթիկը և ասաց.

-Շու՛տ արա, ուշանում ես: Մի՛ սպասեցրու նրան: Նշանվե՛ք: Ամուսնացե՛ք ինչքան հնարավոր է շուտ: Դու արդեն պետք է, որ այստեղ չլինեիր: Քո ժամանակից է գնում: Խաղաղ երկինք ձեզ...

Ա՜խ, այդ խաղաղությունը... որքան անհրաժեշտ է բոլորին, բոլորի մեջ նաև ինձ: Կբերեմ, հաստատ մի օր կբերեմ խաղաղությունը. մորս ու Մանեիս համար, բոլորի համար, բոլոր մայրերի ու Մանե-ների համար:

Շտապում եմ տուն՝ ուշադրություն չդարձնելով շուրջս կատարվող անցուդար-ձին: Շատ եմ կարոտել Մանեին: Պատկե-րացնու՞մ եք՝ ամբողջ մեկ օր է՝ չեմ տեսնում նրան: Մտնում եմ տուն և տեսնում, որ հայրս փայտ է կտրատում: Այստեղ այդպես է. տարվա ինը ամիսներին փայտ ենք կուտակում ձմռան երեք ամիսների համար: Արագ-արագ փոխվում եմ և գալիս հորս օգնելու.

-Պա՛պ, կներես, որ չեմ հասցնում օգնել տնային գործերում: Տասը օրով

արձակուրդ եմ վերցրել նշանդրեքիս համար: Այս օրերի ընթացքում, որքան հնարավոր է, շատ օգտակար կլինեմ:

-Ի՞նչ կներես, ի՞նչ օգտակար լինել...Տղա՛ս, քո աշխատանքը առավել կարևոր է: Ամեն մեկս անում ենք այն, ինչ մեր ուժը ներում է: Քանի ի վիճակի ես, անձդ ծառայեցրու հայրենիքի համար: Իմ որդին՝ իմ Ավոն, ծնված է հայրենիքի պաշտպան լինելու համար: Պաշտպանի՛ր ընտանիքդ և Մանեիդ, մնացածը մենք մեր ուժերի ներածին չափով կանենք:

Հորս խոսքերը խրատական էին: Օգնեցի, շուտ վերջացրինք աշխատանքը, և գնացի նրա հետ հանդիպման, նրա, ում հետ հանդիպման մասին մտածում եմ արևածագից մինչև մայրամուտ:

-Լավ են լարել ձայնալարերդ: Գոհ եմ: Ինչպես նաև մի օրվա ընթացքում մաթեմատիկա ես երևի կրկնել, որովհետև այս անգամ միանգամից կարողացար վերհիշել, թե որ թվի դեպքում ինչ է հասկացվում:

-Գիտե՞ս, ամբողջ գիշեր երգում էի, այդ պատճառով ձայնս բացվել է: Նոր զանգեցին և հրավիրեցին կրկեսում աշխատանքի՝ ագռավների երգչախմբում որպես մենակատար:

-Դու ոչ մի երգչախումբ էլ չես գնա, իմ սրտի մենակատարը այլ բեմերից հրավերներ չի ընդունում:

-Սիրում եմ քեզ ամեն վայրկյան առավել, քան նախորդ վայրկյանը: Դե՛, պատմի՛ր, տեսնեմ՝ ինչ են ասել ձերոնք: Ե՞րբ ենք նշանվում: Ո՞ր օրվանից ևս մեկ

քայլ առաջ կգնանք՝ սովորական սիրող զույգերից վեր ածվելով նշանածների:

-Երևի երկու-երեք օրից: Ա՛վ, դու գիտես՝ քեզ ինչքան են հավանում մեր բարեկամները: Հորեղբայրս, մորաքույրս իրենց ընտանիքներով գալիս են արտասահմանից: Սա ևս մեկ պատճառ է, որ նրանք գան հայրենիք, ուզում են մեր ուրախությանը ներկա լինել, անձամբ շնորհավորել մեր՝ այդ օրվանից արդեն պաշտոնապես հաստատված հարաբերությունները: Ասեմ նաև, որ հորեղբայրս գալիս է՝ տուն գնի այստեղ. ցանկանում է ընտանիքով տեղափոխվել հայրենիք: Եղբորս բանակ գնալու ժամանակն է, ուզում են, որ մեր բանակում ծառայի: Ինձ թվում է՝ճիշտ որոշում է:

-Ինչպիսի՜ հիանալի նորություն: Շատ ուրախացա, երանի բոլորը վերադառ-

նային, երանի հայրենիքի ձայնը բոլորի ականջին լսելի լիներ: «Ա՜խ, իմ հայրենիքի ջուրը, քաղցր է, քան նռան գինին»,- քթիս տակ սկսեցի երգել տատիս սիրած երգը:

-Եվս մի բան պետք է ասեմ: Ուզում եմ նաև հրավիրենք մեր հարևան տիկին Մարինեին: Ինչ նրա որդին զոհվել է, ոչ ոք նրանց դռնով չի մտնում, մի տեսակ շատ է կոտրվել: Կցանկանայի գոնե մի քանի ժամով մոռանար այդ ծանր վիշտը, զրուցեր մարդկանց հետ, թեթևանար, այլապես ինչքան վիշտը կուտակվում է, այնքան սիրտը ավելի է ցավում: Ի՞նչ կլինի՝ հենց այս պահին գնանք նրանց տուն:

-Ինչպես ուզում ես: Տիկին Մարինեին ես երբեք էլ չեմ մոռացել: Հաճախ եմ երեկոները այցելում նրան և զրուցում անցած գնացածի մասին: Նա ուժեղ կին էր,

բայց որդուց հետո շատ է հյուծվել, դարձել քչախոս: Երկար խոսում է միայն որդու նկարի հետ, սակայն որից պատասխան չի լսում: Գնանք նրանց տուն, բայց չենք ստիպի:

Մեր տնից մինչև տիկին Մարինեի տունը հինգ րոպեի ճանապարհ էր: Բայց ասես այն ժամեր տևեր: Ճանապարհին ոչ մի բառ չէինք խոսում: Մտքերով էինք ընկել: Նայեցի Մանեին, լացում էր: Հանկարծ ձեռքիցս ուժեղ բռնեց և լացելով ասաց.

-Ավո՛, Ա՛վ, լսու՞մ ես, խո՛սք տուր, որ ուշադիր կլինես դիրքերում, խո՛սք տուր, որ չես թողնի այն ցավը զգամ, ինչ նա է զգում: Չեմ ուզում կորցնել քո նյութական գոյությունը: Դու իմ թթվածինն ես և իմ լույսը մթության մեջ:

-Խոսք եմ տալիս,- ամուր գրկեցի նրան՝ ամբողջ մարմնովս մեկ սարսուռ զգալով, -խոսք եմ տալիս, որ իմ գոյությունը միշտ կզգաս:

Այնպիսի դժվարությամբ բացեցի դուռը, ասես նրա որդու լուրը նոր պիտի հայտնեի: Տիկին Մարինեն, մեզ տեսնելով, դեմքի արտահայտությունը փոխեց, ժըպտաց, բայց այն ժպիտ դժվար կլիներ համարել, բայց, այնուամենայնիվ, ուրախացավ:

-Ավո՛, արի՛ գրկեմ: Թող որդուս կարոտը քեզնից առնեմ:

Մոտեցա, ամուր գրկեցի նրան: Լեզուս պապանձվել էր, օդը չէր հերիքում: Մի կերպ հանգստացրի: Բայց ինչպե՞ս ասել, թե ինչի համար ենք եկել, ի՞նչ նրբությամբ մոտենալ այդ հրավերին, որ մերժում չստանանք:

-Տիկի՛ն Մարինե, ճիշտն ասած, լավ լուրով ենք եկել ձեր տուն: Եթե ընկերս ողջ լիներ, հաստատ նա էլ կուրախանար այս լուրից: Մի քանի օրից պատրաստվում ենք նշանվել: Մեր մեծ ցանկությունն է, որ դուք ներկա լինեք թե՛ ձեր, թե՛ ձեր որդու փոխարեն:

-Ավետի՛ք, -այս անգամ հաստատ ժպտում էր,- ինչքան էլ քեզ դուր չգա այդ կոչելաձևը, ես քեզ այդպես կկոչեմ, միայն նա էր քեզ այդպես կոչում: Ուրախ եմ ձեր որոշման համար: Երկուսդ էլ իմ աչքի առաջ եք մեծացել, սեփական որդուս հետ մեր չհասած ծիրանները գողացել: Ես միշտ էլ հավանել եմ ձեզ, երևի կհիշեք, որ ես եմ առաջինը ասել, որ դուք ընկերներ չեք, դուք զուգընկերներ եք, իսկ դուք միշտ ինձ սաստում էիք՝ փորձելով հակառակը ապացուցել: Հիմա արդեն ոչինչ չկա ապացուցելու:

Մնում է՝ հրաժարվեմ ձեր հրավերից՝ հասկանալի պատճառներով և իմ օրինանքը տամ: Ձեր այդ քայլով դուք դնում եք ձեր ընդհանուր տան հիմքի առաջին քարը: Որքան ամուր է հիմքը, այնքան անսասան է տունը: Չթողնեք, որ ոչ մի քամի անգամ մոտենա կառույցին: Չկշտանաք իրարից: Ամեն մի պահը վայելե՛ք: Ապրե՛ք այնպես, ասես ձեր ապրելու վերջին վայրկյաններն են:

-Ընտրությունը ձերն է: Շատ շնորհակալ ենք ծնողական խորհուրդների համար: Եվ ներողություն, որ ժամանակին անիմաստ ապացույցներով էինք զբաղված: Լա՛վ եղեք: Գնացինք, եթե փոշմանեք, միշտ պատրաստ ենք ձեզ տեսնել մեր տանը, մեր ուրախություններին:

Հեռացանք տնից: Ինչպես նրանց տուն գնալու ճանապարհին էինք լուռ, այնպես էլ հիմա. երևի ճիշտն էլ դա էր: Ոչ մի խոսք չէր կարող սփոփել մոր ցաված սիրտը: Որդին երբեք չի սպասում մորը: Այդ մայրն է, որ միշտ սպասում է որդուն, (սակայն ապարդյուն), սպասում հրաշքի, հրաշք, որին չհավատալ չի լինի, հրաշք, որին ամեն մայր այլ անուն է տալիս:

Արդեն ուշ գիշեր էր: Ես ու Մանեն քայլում էինք մեր սիրած ճանապարհով: Դա այն ճանապարհն է, որը ոչ մի յուրահատկություն չունի մնացած սիրահար զույգերի համար, չկան հատուկ նստարաններ, ռոմանտիկ միջավայր, անգամ ձյութապատ չէ: Փոխարենը ամառը լիքն է փոշով, իսկ ձմեռը՝ցեխով: Դա մեր փողոցն է: Հիշում եմ, թե ինչպես էինք ժամանակին ես ու Մանեն մեր կոշիկների վրայից հագնում տոպրակներ և

ցեխաջրերի միջով ցատկոտելով՝ հաղթահարում այդ ցեխային լաբիրինթոսը: Մեր փողոցը, սակայն, շա՛տ, շատ ենք սիրում: Այդ փողոցի հետ են կապված մեր բոլոր լավ ու վատ հիշողությունները, Մանեի սիրտը շահելու բոլոր կռիվները, Մանեի աչքին «լավ տղա» ձևանալու բոլոր քայլերը: Մեր փողոցում է, որ միշտ տուն-տունիկ խաղալու ժամանակ ես պապան էի, Մանեն՝ մաման: Այստեղ է, որ Մանեն ու մեր բակից ևս մի քանի աղջիկ կռվել են հարևան փողոցի աղջիկների հետ, ինչ է թե մերոնք լսել են, որ այն աղջիկները մեր փողոցով անցնելիս քանդել են վոլեյբոլի համար կապված պարանը, մեր ֆուտբոլի համար դրված քարից դարպասները և, որ ամենակարևորն է, նրանք պոկել էին «ամենալավ բակ» ցուցանակը:

Մանեի հետ այդ բոլորը վերհիշելուց հետո, իրար հրաժեշտ տվեցինք: Իրական կյանքից միանգամից մտանք վիրտուալ կյանք: Արդեն նա հասցրել էր գրել հաղորդագրություն, որ շատ է սիրում ինձ: Չգիտեմ հավատամ, թե՝ ոչ: Բայց ինձ թվում էր, որ անչափ շատ է սիրում, չէ որ շատը սահմաններ ունի, դա քչից հետո սկսվում է մինչև շատի վերջը: Բայց անչափ շատը չունի սահմաններ: Չկան նրա ոչ՛ սկիզբը և ո՛չ էլ վերջը:

Առավոտվա ժամը վեցն էր, երբ որ զարթնե-ցի տարօրինակ զանգից: Տարօրինակ, որով-հետև ընկերս էր զանգում զորամասից. չէ՞ որ նա գիտի, որ արձակուրդում եմ.

-Ախպե՛ր ջան, շատ կներես, հրաման եմ կատարում: Գիտեմ, որ արձա-

կուրդի մեջ ես, բայց հրամանատարը ասաց, որ քեզ զանգեմ և կանչեմ:

-Կարո՞ղ ես բացատրել, թե ի՞նչ է կատարվում:

-Ինձ թվում է՝ լուրջ է, կգաս, կիմանաս:

Անմիջապես ամբողջ ապրածս աչքիս առաջ եկավ: Դեռևս այսքան չէի վախեցել: Թվում էր, թե երջանկությանս դռները արդեն թակում են, բայց, ոչ, այլ դռներ են թակում, որը անպայման պետք էր բացել: Մյուս կողմից էլ երկու օրից պիտի նշանվեմ: Բա որ....: Մանեին ոչինչ չեմ ասի, գնամ մորս (ինչպես միշտ) խաբեմ, որ տարեկան ստուգումներ են:

-Խաղաղությունը չմոռանաս, տղա՛ս:

-Միշտ հիշում եմ, մա՛:

Ավտոն ինձ էր սպասում մեր դռան մոտ:

-Ի՞նչ է պատահել, հիմա էլ հո հեռախոսով չենք խոսում, կոնկրետ բան ասա՛,- շունչս կտրելով հարցրի:

-Ավո՛, ըստ հետախուզական տվյալների՝ հակառակորդը ցանկանում է երկու օրից դիվերսիոն ներթափանցման փորձ կատարել: Արդեն այսօրվանից նկատվել են նրանց տեղակայման վայրերը: Վաղը գիշերով պետք է առաջ գնանք և ցույց տանք շնորհին, որ չի կարելի իրենց բներից առաջ գալ:

-Փաստորեն երկու օրից, հա՞, փաստորեն եթե մի բան լինի, Ման...

-Սու՛ս մնա, այ՛ տղա: Դու ե՞րբ էիր այսքան ժամանակ մի բան լինելու մասին մտածել:

-Լավ կլինի, գնում ենք խաղաղության հետևից, լավ կլինի:

Այդ ամբողջ օրը զորամասում հետազոտում էինք մեր դիրքերի առաջնային հատվածները, որոշում, թե որ կողմով պետք է առաջ շարժվել, որ կողմով հետ գալ, ով պետք է առջևից գնար, քանի հոգով: Որոշված էր. չորս հոգով: Առաջինը կգնա հետախույզ-սակրավորը, հետո՝ ես, ընկերս և մեր ամենապատրաստված զինվորը: Ամեն ինչ իր տեղում էր, սպասում ենք՝ մի քիչ էլ մթնի, և շարժվենք առաջ:

Անցավ ևս երեք ու կես ժամ:

-Գնացի՛նք:

***

Առավոտյան ժամը հինգն անց էր: Ամեն ինչ կատարված էր փայլուն կերպով: Ես ողջ եմ, ողջ են նաև ընկերներս: Հակառակորդը, ի տարբերություն մեզ, ոչնչացված: Այսօր նշանդրեքս է: Այսօր հետս նվեր եմ տանում մորս ու սիրածիս: Շա՛տ փոքր, չերևացող նվեր: Մի բուռ խաղաղություն եմ տանում, որը հավաքել եմ իմ ձեռքերով: Այսօր կարող էր այլ կերպ բացվել լուսաբացը, արեգակը՝ կարմիրով շաղախված, կարմիր արյամբ... Բայց պատկերացրեք՝ ինչպիսի արևածագ է՝ դեղին, աչք ծակող արևածագ: Արևածագ է, որը ավետում է նոր սկիզբ՝ նոր օրվա սկիզբ, նոր սպասումների ու հարաբերությունների, նոր սիրո ու նոր կյանքի:

Միացնում եմ հեռախոսս: Մոտավոր պատկերը գիտեմ: Թվերով էլ մոտավորապես պատկերացնում եմ, թե քանի զանգ, քանի հաղորդագրություն կլինի և ում կողմից: Մորս զանգերը հաշիվ չունեին, Մանեինը՝ նույնպես: Բայց ի՞նչն էր հետաքրքիր, Մանեի միակ հաղորդագրությունը, որը առանց մի բառ փոխելու այսպես էր. «Ավո՛, մեր նշանադրությունը կկայանա, քեզ հետ լինի, թե առանց քեզ, ես քո նշանածն եմ այսօրվանից: Գալու ես դու, ես դա գիտեմ, բերելու ես քեզ՝ ինձ համար, սերդ՝ սրտիս համար և խաղաղություն՝ երկրիս համար»:

Ախր ինչպե՞ս իմացավ, անջատված հեռախոսի՞ցս: Բայց մի՞գուցե մարտկոցն էր նստել: Մայրս նույնպես չէր ասել, որովհետև նա ինքն անգամ չգիտեր: Համացանցում էլ հաստատ չկար, որովհետև, մենք՝ հետախույզներս, նախ խուսա-

փում ենք հանրային քննարկումներից և երկրորդ, եթե ինչ-որ կերպ իմանային և գրեին, ապա կտապալեին մեր ծրագրերը, և գուցե թուրքերը փորձեին ի կատար ածել իրենց պլանները: Ինչևիցե, այդպես էլ մնաց առեղծված: Երևի սիրող սիրտը գուշակում է, իսկ իմ սիրտը այս պահին գուշակում է, որ պետք է գնամ նրա մոտ, ասեմ, որ եկել եմ, որ առանց ինձ նշանվելու կարիք չկա:

Պայմանավորվել էինք, որ երեկոյան ժամը յոթին պիտի գնանք Մանեենց տուն՝ մատին նշան դնելու: Նշան, որը բոլորին կը-հուշի, որ նրա սիրտն արդեն զբաղված է: Նրա ամեն մի մկանն եմ անգամ զբաղեցրել:

Ժամը հինգ անց կես արդեն տանն էի: Մայրս, ուրախությունն ու հուզմունքը իրար խառնած, լացելով եկավ ու գրկեց ինձ.

-Ու՞ր էիր, ա՛յ բալա: Աչքս չորացավ ճամփիդ նայելուց: Ու՞ր ես կորել, քեզ հետ ամեն ինչ լա՞վ է, ինձ նայի՛ր, քայլի՛ր, ձեռքդ բարձրացրու՛ ու իջեցրու՛, լսու՞մ ես ինձ, քանի՞ մատ եմ ցույց տալիս:

-Մա՛մ, մամա՛, վերջացրու՛,- մի կերպ ծիծաղի միջից կարողացա արտաբերել այդ մի քանի բառը:

-Դե ասա՛, որ ամեն ինչ լավ է, վերջապես ասա՛, որ բերել ես...

-Ամեն ինչ լավ է մա՛մ ջան, վերջապես բերել եմ, բայց շատ չէ, մի բուռ, մնացածը ուրիշ առիթով կբերեմ:

-Զանգե՞լ ես Մանեին, գիտի՞, որ եկել ես: Խեղճը ոոպեն մեկ մեր տուն էր գա-լիս՝ տեսնի ինչ նորություն կա: Վերջին անգամ, որ եկավ, ասաց, որ գիտի, որ կգաս, բայց

առանձնակի պատրաստված չէր, աչքերի տակերն էլ սևացած էին:

-Հենց հիմա էլ կզանգեմ, որ դուրս գա:

Հավաքեցի Մանեի համարը, մինչև ականջիս դնելը, լսվեց՝ «Ավո՛ս»: Մեկ րոպե չտևեց, արդեն գրկումս էր: Փոքրիկ երեխայի նման հեկեկում էր:

-Ախր, ասում էի չէ՞, ասում էի, որ կգա իմ Ավոն: Ասում էի, որ կնշանվեմ այսօր քեզ հետ: Ես գիտեի, ես գիտեի:

-Եկել եմ, փոքրի՛կս, ամեն ինչ շատ լավ է: Ուղղակի երկու օրով փորձաշրջան անցար: Որոշեցի առանց ասելու անջատել հեռախոսս և գնալ գյուղ հանգստանալու:

-Երևի գյուղում էլ այնքան ես չորեք-թաթ քայլել, որ ծնկներդ պատռվել են: Հազար եմ ասել, որ գնում ես, այն հաստ համազգեստդ հագիր, գոնե սողալիս չի պատռվի, ու քերծվածքներ չեն առաջանա: Չեմ հարցնի, թե ուր էիր, ինձ ամեն ինչ պարզ է: Ունենք ընդամենը մեկ ժամ պատրաստվելու համար: Երեք, երկու, մեկ: Վազեցինք:

-Սիրում եմ քեզ, բերել եմ, բռով եմ բերել , -տներն այնքան մոտիկ են, որ նախադասությանս վերջին բառը մեր տնից էի գոռում:

Ծնողներս հագած-կապած ինձ են սպասում: Իսկ ես հատուկ պատրաստվելու բան չունեմ, ուղղակի լոգանք ընդունեմ և թրաշվեմ: Մեր տանն էր նաև տիկին Մարինեն, ում ներկայությունը իմ ուրախությունը

բազմապատկեց: Այժմ ոչ մի խանգարող հանգամանք չկա, հակառակը՝ սատարող հանգամանքներն են ավելացել:

Պայմանավորված ժամանակին մնացել էր ընդամենը տաս րոպե: Դեռևս հինգ րոպե կա, դա էլ էր բավական Մանեի տուն հասնելու համար: Վերցրի ծաղկեփունջը և մատանին: Մնացած բարեկամներս իմ հետևից զարդարված զամբյուղներով գալիս էին:

Արդեն նրանց տանն ենք: Մանեն այսքան կարճ ժամանակում այնքան էր սիրունացել, որ պատկերացնելու չէր: Չնայած առանձնապես սիրունանալու կարիք էլ չուներ: Նա սիրուն է ամեն պահ՝ թե՛ առավոտյան արթնացած ժամանակ, թե՛ կեսօրին ճաշ պատրաստելիս և թե՛ երեկոյան երեկույթի գնալիս:

Հայրս սովետական դաստիարակություն ստացած մարդ է և բնական է, որ խոսք կբացեր ավանդական ձևերով. «Մենք եկել ենք ձեր ծաղիկը տանենք մեր ծաղկանոցում տնկենք», -մի տեսակ հնացած է և մի քիչ էլ ծիծաղելի նման ձևով նրանց տուն մտնելը: Բայց չասել չի լինի: Կան ավանդույթներ, որոնցից շեղվելը հասարակության համար կդառնա ահագին ժամանակ քննարկման առարկա: Ես առանձնապես չեմ մտածում այդպիսի բուռն քննարկումների կիզակետում հայտնվելու մասին: Ես միշտ էլ կողմ եմ եղել ավանդականին, բայց երբեմն կարելի է շեղվել դրանից: Ավանդականը կարելի է նաև այնպես ձևափոխած ներկայացնել, որ արդի ժամանակներում չզիջի ներկայում կատարվող և ոչ մի մոդայիկ գործողության: Հորս «առաջնախաղին» հաջորդեց Մանեի հոր պատասխանը, որը

նույնքան զվարճալի թվաց: Մոտավոր այսպես էր ասում, որ նա տալիս է ծաղիկ մեր ծաղկանոցի համար, կրակ է տալիս մեր վառարանը միշտ վառ պահելու համար: Օրինակ, ես այդ ավանդական երկխոսությանը կավելացնեի մի քանի բառ, և պատկերն ավելի կգեղեցկանար, կդառնար ոչ շաբլոն: Կասեի, որ նա ինձ է տալիս ծաղիկ՝ հոգուս պարտեզի և կրակ՝ սիրտս միշտ տաք պահելու համար:

Մատանին, ինչպես հարկն էր, դրեցի նրա մատին: Օգտվելով նրանից, որ բոլորը զբաղված էին տարբեր թեմաներով զրուցելով, մեզ տարբեր ցանկությունների տարափ հասցեագրելով՝ Մանեին խլեցի նրանցից, և դուրս եկանք փողոց՝ այնտեղ, որտեղ ամեն ինչ սկսվել էր:

-Այս պահից սկսած՝ իմ բոլոր գրվածքները, իմ շնչելը, իմ այս կյանքում ապրելը միայն քեզ համար կլինեն: Այսօրվանից դու կարող ես չմտածել, թե մեր դասարանից որ աղջիկը, փողոցով անցնող որ անծանոթը գիտի կամ չգիտի, թե ում են ուղղված տողերս: Բոլորն էլ ինչ-որ մի ձևով կիմանան: Չիմանան էլ, ոչինչ: Բարձրաձայն սիրելն ու՞մ է պետք: Նա, ով ամբողջ աշխարհով մեկ ասում է, որ սիրում է, կարող է չկարողանա սիրածի աչքերին նայելով այդքանը ասել: Իսկ ես նայում եմ աչքերիդ և ասում՝ սիրում եմ ու կսիրեմ միշտ, երկրում, թե երկնքում:

-Գիտեմ, գիտեմ: Արդեն պետք չէ ինձ և ոչ մեկի կարծիքը լսելը: Ես էլ քեզ եմ սիրում, կարծում եմ՝ կռահել ես: Որքան կուզեի՝ ամեն օրս այս օրվա նման հանգիստ լիներ. ոչ մի ձայն, ոչ մի վատ լուր

չլսեինք դիրքերից: Ինչքան չլսենք, այնքան համոզված կլինեմ, որ կողքիս ես, որ չես խաբում «գյուղ գնալով»:

-Կլինի՝ ինչպես ուզում ես: Ասել եմ ու չեմ հոգնի ասելուց: Մի օր կգա, և ես խաղաղությունը կբերեմ: Այս անգամ ոչ թե մի բուռ, այլ մի անսահմանություն մի հավերժության համար: Կգա այդ օրը, ես գիտեմ...

-Եթե դու ես ասում, հավատում եմ: Լավ, արի՛ մեզնից խոսենք:

-Ես քեզ հետ պատրաստ եմ անգամ Նյուտոնի օրենքներից խոսել, չնայած տեղյակ չեմ անգամ, թե այդ օրենքները որ բնագավառին են վերաբերում:

-Չէ, Նյուտոնին հանգի՛ստ թող, ով որ տեղյակ է, նա կխոսի: Կասես՝ շտապում է, կասես՝ սովորաբար տղաներն են այդպի-

սի թեմաներ բացում, բայց ինձ հետա-քրքրում են մեր հետագա քայլերը: Ճիշտ է, գժի տպավորություն եմ թողնում, բայց գժվել եմ քո սիրուց: Բժի՛շկ, ես հավետ գիժ կմնամ, միայն թե դու էլ հավետ իմ բժիշկը լինես և միայն իմ:

-Գի՛ժս, չեմ ասի, որ տարօրինակ ես, չեմ ասի, որ շտապում ես: Իսկը ժամանակն է դրանից խոսելու: Ես ճոխ հարսանիքների սիրահար չեմ և ոչ էլ դրա ժամանակը ունեմ: Կուզեի դեռևս օր չորոշեինք: Բայց ասեմ, որ ուզում եմ միասին գնանք մանկական երազանքս իրականացնելու: Մեր միասին ճամփորդությունը շատ կուզեի լիներ դեպի Լոնդոն: Դեռևս երեխա ժամանակ, երբ դեռ չգիտեի, թե Լոնդոնն ինչ է՝ ցամաք է թե ջուր, քաղաք է թե սար կամ անապատ, բոլորի հարցին, թե երբ մեծանամ, որտեղ կուզեի գնալ, պատասխանս

միշտ նույնն էր՝ Լոնդոն: Այժմ մեծացել եմ, և Լոնդոն գնալուս ժամանակն է: Դե՞մ եք:

-Ես Ձեզ հետ կգամ անգամ աշխարհի ծայրը և դեռ մի քիչ էլ ավելին:

-Ուրեմն որոշված է: Օրվա և ժամի մասին նախօրոք կտեղեկացվեք: Շնորհակալություն մեր ծառայություններից օգտվելու համար:

-Ավո՛, ոնց որ մոռացել ենք, թե այսօր ինչ օր է, և այս պահին որտեղ պիտի լինենք: Միգուցե գնա՞նք վերև: Տեսնես որքան կենացներ բաց թողեցինք, քանի ցանկություն չլսեցինք: Գնանք, ամոթ է: Սկեսուրս կասի, որ ապագա հարսը արդեն իսկ փախել է հայրական տնից:

-Սկեսուրդ ոչինչ էլ չի ասի: Նա քեզ գիտի այն ժամանակվանից, երբվանից որ ինձ գիտի:

-Համոզեցիր: Իսկ հիմա արագ բարձ-բանանք:

Մանեն իրավացի էր: Երբ որ մտանք սենյակ, բոլորի հայացքները ուղղվեցին մեզ: Բոլորը փորձում էին վայրկյան առաջ իրենց ցանկությունները մեզ լսելի դարձնել: Իսկ այն կենացները, որոնք բաց էինք թողել, հայրս հակիրճ ներկայացրեց: Բոլորն ուրախ էին, բոլորն ուզում էին, որքան հնարավոր է շուտ, մեզ ընտանիք ստեղծած տեսնեին: Մենք էլ դեմ չէինք այդ գաղափարին, ուղղակի անհրաժեշտ էր ցանկությունները համապատասխանեցնել հնարավորություններին, ժամանակին, իրադրությանը, ինչի համար ես ու Մանեն մոտ կես ժամ

առաջ պլան էինք գծել: Հանկարծ բոլորը միանգամից լռեցին: Տիկին Մարինեն բաժակը ձեռքին մոտեցել էր մեզ: Ձայնը դողում էր, հազիվ էին հասկացվում նրա արտասանած բառերը.

-Ի՛մ զավակներ, երբ որ դուք եկաք՝ ինձ հրավիրելու ձեր նշանադրությանը, ես հրաժարվեցի: Շատ էի ուզում գալ, բայց ներսից ինչ-որ բան չէր թույլատրում համաձայնել ձեր հրավերին: Անցած գիշեր հետս մի անբացատրելի բան կատարվեց. երազումս տղաս եկավ ու ասաց, որ անպայման պիտի գամ: Նաև ասաց, որ հենց այսպիսի ուրախությունների համար է զոհել սեփական կյանքը: Ուզում էր իր ընկերոջ ուրախությանը ներկա լինեմ որպես իր սեփական ուրախության: Եվ վերջին նախադասությունն է, որ արթնացրեց ինձ: Ա-

սում էր՝ Ավոյին փոխանցեմ, որ իր հետ հանդիպել է ուզում:

Բոլորը քարացած լսում էին: Ես ու Մանեն, իրար ձեռքից բռնած, լու՛ռ արտասվում էինք: Բայց ախր ինչու՞ է ուզում հետս հանդիպել, տարօրինակ էր:

Այս ծանր ու տխուր մթնոլորտը ցրելու համար մայրս պատմություն հիշեց իմ ու ընկերոջս մասին և ստիպեց, որ պատմեմ: Ես էլ, լավ գնահատելով իրավիճակը, սկսեցի պատմությունս:

-Երբ դեռ փոքր էինք, և իմ ու Մանեի միջև միայն ընկերություն էր, ես և ընկերս որոշեցինք, որ իբր ես Մանեին սիրում եմ, և պետք է փախցնենք: Ամեն ինչ պատրաստել էինք: Այդ օրը ես, ընկերս, Մանեն ու իր ընկերուհին որոշել էինք, որ ամեն մեկս տնից ուտելիք պիտի վերցնեինք և գնայինք՝

մեր այգում հաց ուտելու: Ես, ուտելիքից բացի, մեկ պարկ էի վերցրել, որ իբր Մանեին գցեինք պարկի մեջ և տանեինք մեր տուն: Բայց ընկերս չհամբերեց: Մինչև վերջ էլ չէր կարողանում գաղտնիք պահել: Շատ պարզ մարդ էր, մի տոկոս խորամանկություն չուներ: Մեր ծրագրերը ինձնից թաքուն Մանեին պատմեց: Մանեն ձև էր բռնել, որ իբր չէր էլ լսել: Մի քիչ հետո Մանեն իր ընկերուհու հետ առանձնացավ: Որոշ ժամանակ անց նրանք ծիծաղելով մոտեցան մեզ, և շարունակեցինք մեր ճանապարհը: Հասանք տեղ, մի մեծ քարի վրա դասավորեցինք մեզ հետ վերցրած ուտելիքը, բաժակները հյութ լցրինք, և չգիտես ինչու, բաժակները իրար զարկեցինք: Երևի տեսել էինք, թե ինչպես էին մեծերը այդպես անում, որոշեցինք մենք էլ կրկնել: Մոտ կես ժամից տնից բերած ուտելիքը կերել էինք: Ես աչքով, ունքով

բացատրում էի ընկերոջս, որ փախցնելու ժամանակն է: Դե, քանի որ ասացի, որ շատ պարզ երեխա էր, չնկատեց, որ հուշում եմ: Կարծում էր, թե գլուխս է ցավում, դրա համար եմ աչքերս բաց ու փակ անում: Որոշեցի ինքս գլխիս ճարը տեսնել: Բայց այդ պահին Մանեն առաջարկեց խաղ խաղալ: Տեսավ, որ հետս պարկ եմ բերել և ասաց, որ ես պետք է մտնեմ պարկի մեջ, անպայման փակեմ աչքերս, մինչև տասը հաշվեմ և դուրս գամ՝ իրենց փնտրելու: Արդեն պարկի մեջ էի. փակեցի աչքերս և հաշվեցի մինչև տասը: Հաշվելուց հետո արագ ուզեցի դուրս գալ պարկից, որ գոնե ձայներից հասկանայի, թե որտեղ կարող էին թաքնված լինել: Բայց պարզվեց, որ պարկը կապել էին, և իմ դուրս գալն անհնար էր: Իսկ դրսից լսվում էր բարձր քրքջոց: Փաստորեն, փոս փորողն ընկավ փոսի մեջ: Այսքան բան:

Պատմելուց հետո աչքերս ամոթով բարձրացրի գետնից: Բոլորը ծիծաղում էին: Տիկին Մարինեն, որ նոր լացում էր, նա էլ էր ծիծաղում: Ավելի շատ ուրախացա նրա ծիծաղից: Դե իսկ Մանեն կարմրել էր: Այսօրվա հեզ ու համեստ աղջիկը մի քանի տարի առաջ մեր փողոցի ամենաչարաճճին էր, և հենց դա էլ ստիպեց, որ սիրահարվեմ նրան: Պատմությունը պատմության հետևից իրար հաջորդելով՝ պատմեցինք, մի լավ ուրախացանք, վերհիշեցինք մեր մանկությունը: Երևի մանկությունն այն միակ ժամանակահատվածն է, որից, որքան հնարավոր է, շուտ ուզում ես դուրս գալ, բայց դուրս գալուց հետո էլ, որքան հնարավոր է, շուտ ուզում ես նորից վերադառնալ այնտեղ:

Չնկատեցինք էլ, թե ինչպես ժամանակը թռավ, և արդեն պետք է հրաժեշտ

տայինք: Իմ ամենաչսիրած արարողությունն է դա: Թեկուզ մեր տները կողք կողքի էին, բայց ասես կիլոմետրերով հեռու ապրեինք: Ինձ համար, որ այսքան դժվար էր, տեսնես ինչպե՞ս են դիմանում օվկիանոսի տարբեր կողմերում ապրող սիրող մարդիկ:

Բոլորս դուրս եկանք և, որպես վերջաբան, նորից ինձ ուղղեցին բոլոր ցանկությունները: Մի պահ հրավառության ձայներ լսվեցին: Խոսակցությունը միանգամից ընդհատվեց: Թեքվեցինք, որ տեսնենք, թե որ կողմից էր այն, ինչպիսի գույներով կներկեր երկինքը: Հրավառություն էր, առաջնագծում կրկին հրավառություն էր:

Երբ զարթնեցի, ժամը տասներկուսն էր, օրը՝ կիրակի, այն կիրակին, որը վերջապես պետք է ընկերներիս հետ անցկացնելուն նվիրեի: Շատ էի խաբել նրանց՝

կիրակիները մեկից մյուսը տեղափոխելով: Բայց այս անգամ հաստատ էի որոշել, համ էլ առիթ կար. վերջիվերջո նրանց ընկերն էր նշանվել:

Մինչև տեղիցս վեր կենալը հատ-հատ զանգեցի ընկերներիս և նրանց առաջարկեցի հավաքվել: Նրանցից և ոչ ոք չհավատաց ասածիս. մտածում էին՝ երեկվանից խմած եմ, թե ե՞րբ է Ավոն այսքան ժամանակ զանգել իրենց՝ հավաքվելու համար: Բայց հասկացան, որ ամեն ինչ լուրջ է, երբ ասացի, որ մեր մշտական վայրում ենք հավաքվելու՝ այնտեղ, որտեղ ընկերացանք, որտեղ բազում կռիվների միջով անցանք, հասկացանք, որ ընկերներ ենք, որ ամեն մեկս մյուսի համար պատրաստ է անգամ սեփական կյանքը զոհաբերելու:

Մեր ընկերներից էր Կարենը՝ տիկին Մարինեի որդին, որը կյանքը զոհել է

մեզ համար, մեր ընկերության համար, մեր այսօրվա համար: Մեր ընկերական ցուցակից բացակայում է նաև Արմանը, որը գտնվում է արտասահմանում. Բանվորություն է անում: Նշեմ, որ Արմանը լավ կյանքից չէ, որ գտնվում է այնտեղ: Մնացել ենք չորս հոգի՝ ես, Աշոտը, որի հետ նույն զորամասում ենք աշխատում, Արամն ու Հովոն, որոնք էլ երկու եղբոր տղաներ են, բայց նրանք մեր ընկերության «շունն ու կատուն» են, ու չկա մի հարց, որ երկուսով մեկ ընդհանուր հայտարարի գան:

Եվ այդքանից հետո մեր պայմանավորված վայրը ոչ թե ռեստորան էր կամ գարեջրատուն, այլ մեր փողոցն էր, որը մեզ համար և՛ ռեստորան է, և՛ գարեջրատուն: Ինչպես միշտ, այս անգամ ևս առաջինը ես եղա պայմանավորված ժամին պայմանավորված տեղում: Մի քիչ ուշացումով, ինչ-

պես միշտ, իրենց յուրահատուկ լեզվակռիվ-ներով եկան Հովոն ու Արամը: Աշոտը դեռևս չկար. նա աշխատանքից հետո միանգամից այստեղ պիտի գար:

-Ավո՛, ես չեմ, դու ես, չասացի՞ր անց տաս այստեղ լինեք,- հակաճառելով եղբոր՝ասաց Արամը,- հնարավոր չէ, որ ես սխալված լինեմ:

-Ինչպես միշտ, խառնում ես, եղբա՛յր իմ սիրելի, - հեգնանքով շարունակեց Հովոն, -անց տասնհինգ էր ասել. ես լավ հիշողություն ունեմ:

-Չէ, տղե՛րք, մի՛ վիճեք, ոչ՛ անց տաս և ո՛չ էլ անց տասնհինգ: Չե՞ք հիշում, ուղիղ ժամը իննին այստեղ պիտի լինեիք: Երկուսդ էլ սխալ եք և, որպես տույժ, այսօր էլ չեք վիճելու:

-Որ ասում էի, արի՛ ուղիղ ժամը իննին գնանք:

-Որ ասում էի, արի՛ հինգ պակաս գնանք:

-Լա՛վ, լա՛վ, երկուսդ էլ ճիշտ եք: Էս էլ մեր հոգնած զինվորականը: Ա՜յ, ինքն է, որ երբեք չի ուշանում, որ ժամին նա եկավ, ուրեմն այդ ժամին էլ պայմանավորվել էինք,- նախկին թեման փակելու և Աշոտին մի քիչ քաղաքացիական կյանք տեղափոխելու համար սկսեցի ավել-պակաս դուրս տալ:

-Ավո՛ տղա, նախ արի՛, ճակատդ պաչեմ ու շնորհավորեմ: Մի անգամ կպաչեմ, բայց հաշվիր զինվորներիդ ամեն մեկի կողմից հատ-հատ պաչում եմ:

-Հետո ես կշնորհավորեմ: Աշո՛տ, պրծնես, ճակատը փոխանցի՛ր ինձ:

-Չե՞ս տեսնում, որ ժամսլաքի ուղղությամբ՝ ձախից աջ հերթականությամբ ենք շնորհավորում, հետո իմ հերթն է շնորհավորելու, Հովհաննե՛ս հորեղբորորդի:

Տևեց մոտավորապես տաս րոպե, որ որոշեին, թե իրենցից որ մեկն է սկզբից շնորհավորելու: Թե ասա մի ժամ մոտս էիք արդեն, նո՞ր պիտի հիշեիք: Հետո ընկերներիս կարճ պատմեցի երեկվա «ֆիլմիս» բովանդակությունը՝ առանց կենացների: Եվ այնուհետև անցանք հավաքվելու ամենակարևոր մասին. գարեջրի սառը շշերը մեզ էին սպասում: Ոչ մեկը շտապելու տեղ չուներ: Այնքան էինք խմելու, մինչև մեզնից մեկը հարբածությունից տեղում քներ: Դե,

մեկ-մեկ էլ կզրուցենք: Ուրախությանս չափ չկար: Ցավով պետք է նշեմ, բայց նույն կազմով մեր նախորդ հանդիպումը չեմ էլ հիշում, թե երբ էր: Ամեն մեկս մյուսների հետ առանձին հանդիպում ենք, ծնունդնե-րին անպայման լինում ենք, բայց, չգիտես ինչու, միշտ մեկը շուտ էր գալիս, մյուսը՝ ուշանում: Ես միշտ առաջինն էի պայմանավորված վայրում, միջոցառում-ներին և ամենուր:

Մի անգամ, երբ դեռ երեխա էինք, որոշել էինք հարևան թաղամասի տղաների հետ կռվել: Ժամ ու տեղ էինք պայմանավորվել, որտեղ պետք է ներկա-յանայինք երեկոյան ժամը վեցին: Հովոն ու Արամն էլ էին մեր թիմից: Երբ տեղ հասանք, կռվի մեկնարկը տրվեց: Մեր թիմը սկզբից պարտվող կողմն էր, բայց շուտով դարձանք հակառակ կողմի ներկայացուցիչներ և

վերջում էլ «ստացանք» հաղթական դափնե-պսակը: Սակայն ամենածիծաղելի պահն այն էր, որ արդեն ավարտվել էր մեր խաղ-կռիվը, բայց դեռևս Արամն ու Հովոն կռվում էին իրար հետ, չնայած նույն թիմից էին, և պետք է, որ իրար պաշտպանեին, բայց դե այս անգամ նույնպես չկարողացան իրար թիկունքի կանգնել:

-Թո՛ւյլ տվեք կենաց ասել,- Աշոտն էր, մեր քչախոս, բայց ամեն խոսքը ծանր կշիռ ունեցող Աշոտը,- երեկ եղբայրս կայա-ցրեց իր կյանքի կարևոր որոշումներից մեկը: Չեմ ուզում այն սովորական կենացի հետ հնչեցվող խոսք դառնա, ուզում եմ և վստահ եմ, որ այդ որոշման բոլոր կետերը մեկ առ մեկ կիրականացվեն, իհարկե մեր օգնությամբ:

-Համաձայն եմ:

-Բարով եկար, ոչ թե համաձայն եմ, այլ՝ համաձայն ենք: Մեր ընկերոջ որոշման համար խմենք:

-Խմեցինք:

Այս կենացը յուրահատուկ էր նրանով, որ ընկերներս են պատրաստակամություն հայտնում միշտ կողքիս լինելու, ինչին չէի էլ կասկածում: Քիչ բան չեն արել նրանք իմ այս որոշմանը գնալու համար: Չէր հասցրել դեռ գարեջուրը կոկորդներովս իջնել, երբ Հովոն չերևացող փողկապը ձևականորեն ուղղեց՝ ի նշան այն բանի, որ հաջորդ կենացը ինքն էր ուզում ասել:

-Կարենիս կենացն եմ ուզում խմենք: Կարենը հավաքական կերպար է: Նրա մեջ են մտնում և՛ բոլոր զոհված տղաները, և՛ նրանք, ում բախտը, ի տարբերություն Կարենի, բերել է: Կարենը հողս ներքևից է

ամուր պահում, դուք՝ Ավո՛, Աշո՛տ՝ վերևից: Հողս պահողի կենացը:

-Միակ բանն է, որ քեզ հետ համաձայն եմ, -աչքերից հոսող արցունքները մի կերպ զսպելով՝ ավելացրեց Արամը:

Եղանակը հով էր, նպաստավոր՝ գարեջուրը վայելողներիս համար: Մեկը մյուսի հետևից հնչում էին կենացներ, կենացներ, որոնք միայն մենք կարող էինք հնչեցնել: Խմեցինք գարեջուրն առաջին անգամ արտադրողի կենացը, համացանցի գյուտը հորինողի, անգամ երեք օր առաջ ծնվածների կենացը:

Գիշերվա ժամը երկուսն էր, բայց մենք չէինք դադարեցնում մեր քեֆը: Բոլորս ուրախ էինք, հիշել էինք վաղուց մոռացված պատմություններ, որոնցից անցյալի փոշին

փչելով՝ դարձրինք նոր և մի լավ ծիծաղեցինք: Այդ օրվանից այլևս բան չեմ հիշում, երևի նրանք նույնպես: Միայն հիշում եմ, որ մի պահ բոլորս քնել էինք: Վեր կացանք, հավաքեցինք այն ամենը, ինչ մնացել էր և հրաժեշտ տվեցինք՝ նորից հավաքվելու տեսլականով: Հասա տուն. պառկելս ու քնելս մեկ եղավ:

Լույսը բացվեց, և արևի առաջին շողերն ընկան ուղիղ աչքերիս: Ասես ինչ-որ մեկը հատուկ որոշեր ու արևը բերեր՝ կոնկրետ սենյակիս պատուհանից ծագեցնելու: Չզարթնել հնարավոր չէր: Մի քանի րոպե տեղաշորիս հետ կռիվ տալուց հետո նկատեցի, որ մարմինս ահավոր ցավում է: Ուզում էի հիշել, թե երեկ ինչ ֆիզիկական աշխատանքից հետո էի այսպես ջարդոտված: Մի կերպ հիշեցի՝ շիշը շատ էի բարձրացրել-իջեցրել, երևի դրանից է:

Հայրս ու մայրս դեռ քնած էին: Վեր կացա և ոտնաթաթերիս վրա քայլելով՝ հասա խոհանոց: Հանդարտ բացեցի սառնարանը, բայց զգացի, որ անիմաստ էի բացել և նորից շուտ փակեցի: Սուրճն էր ինձ պետք: Զգուշորեն բացեցի դարակը, հանեցի սուրճը, սուրճի բաժակը և պղնձյա սրճեփը: Ինչպիսի՜ իդեալական նախաճաշ: Մի բաժակ սուրճն, առանց որևէ կարիքի, որպես պարտադիր պայման խմեցի և դուրս եկա տնից: Ամեն ինչ այնքան հանգիստ էր, միայն մեկ-մեկ այդ հանգստությունը խախտում էին թռչունների առավոտյան ձայները: Մի քիչ փայտ էր մնացել կտրելու, բայց չցանկացա խանգարել որևէ մեկի քաղցր քունը: Սկսեցի այգու իրերը կարգավորել: Բոլոր գործիքները միասին հավաքեցի, դարպասից մինչև տան մուտքն էլ մաքրեցի խոտածածկույթից: Հետո որոշեցի

ձվածեղ պատրաստել հորս ու մորս համար. մի անգամ էլ թող նրանք զարթնեն և տեսնեն, որ նախաճաշը պատրաստ է: Ինչպես կամաց դուրս էի եկել, նույն ձևով մտա տուն և սկսեցի նախաճաշի պատրաստությունը: Ամանները հանգիստ տեղաշարժել հնարավոր չէր, և հենց ափսեների երաժշտությունից էլ մայրս զարթնեց: Մինչ շարունակում էի աշխատանքս այնպես, իբրև ոչ մի ձայն էլ չի եղել, մեկ էլ.

-Պարո՛ն խոհարար, կներեք իհարկե, նախաճաշի հետ նաև երաժշտությունը պարտադի՞ր է: Ճիշտ է, շատ հաճելի երաժշտություն է, սակայն առավոտները կնախընտրեինք լսել միայն դասական:

-Զարթնե՞լ ես, ես էլ ուզում էի անակընկալ մատուցել ձեզ:

-Անակնկալդ ստացված է: Հաճույքով կուտեմ, դեռ այսքան սոված չեմ եղել:

Մայրս հորս կանչեց, և միասին նստեցինք նախաճաշի: Այնպես ախորժակով էին ուտում, այնպես գովելով այդ սովորական ձվածեղը, ասես չինական այնպիսի ուտեստ լիներ, որն առաջին անգամ էին փորձում: Նրանց ուտելը այնքան ախորժաբեր էր, որ ես էլ սկսեցի ուտել: Այդ սովորական նախաճաշը վեր էր ածվել տոնական ճաշի: Փաստորեն ուտելիքը չէ, որ սեղանը գեղեցկացնում է: Սեղանը գեղեցկացնում են ուտողները: Ոչ միշտ կարող ես ախորժակով ուտել սեղանին դրված ամենահամով ուտեստները, բայց միշտ կարող ես անգամ ամենաանհամ ուտելիքն էլ այնպես ուտել, որ այն դառնա երբևէ կերածդ ամենահամով կերակուրը: Նաև հասցրինք ամեն ինչից մի քիչ զրուցել: Այս

արձակուրդը ավելի շատ մորս համար էր, քանի որ որոշ չափով կարոտն առավ ինձնից, չնայած աշխատանքի պատճառով այնքան եմ բացակայել, որ մեկ տարին էլ չէր հերիքի բացակայությունս լրացնելու համար: Սակայն դրանից ո՛չ ես էի խոսում, ո՛չ մայրս: Երկուսս էլ գիտեինք, որ այլ ձևով պարզապես հնարավոր չէր. առաջին հնարավորության դեպքում ես գալիս էի տուն:

Ընտանեկան համագումարն ավարտելուց հետո դուրս եկա տնից: Արձակուրդիս վերջին օրն էր, և կցանկանայի՝ այն ինչքան հնարավոր է երկար տևեր. ով գիտի, հաջորդ արձակուրդս երբ կլինի, որքան ժամանակով:

Սովորության համաձայն՝ Մանեին դուրս կանչեցի մեր ընդհանուր որոշված

գաղտնաբառերով: Մանեն դուրս եկավ: Նա փայլում էր: Աչքերը ժպտում էին: Մի տեսակ շատ էր ձեռքը աջուձախ, վերև-ներքև անում: Նկատեցի վերջապես: Մատանին էր ցուցադրում ինձ և բոլորին: Երևի նոր էր, տեսնես որտեղի՞ց էր առել: Հետաքրքրությանս չափ ու սահման չկար:

-Մանե՞, երևում է նոր մատանի ես առել: Շատ լավ ճաշակ ունես, կարո՞ղ եմ իմանալ՝ որտեղից է:

-Լավն է, չէ՞: Բա չիմացար, երեկ եկել էին ինձ նշան դնելու: Այնքան երջանիկ եմ, նշանածս էլ աշխարհի ամենասիրուն տղան է: Մի քանի անգամ հրավիրել էին մասնակցելու «Միստր աշխարհ» գեղեցկության մրցույթին, բայց մերժել էր: Ես չէի թողնում: Չէի ուզում, որ ուրիշ աչքեր նրան գնահա-

տեն, նրա գնահատականը ես վաղուց եմ տվել:

-Երանի քո նշանածին: Մի օր կծանոթացնես հետը:

-Եղավ, անպայման, ուղղակի հիշեմ, որ հետս հայելի բերեմ ծանոթացնելիս, թե չէ այլ կերպ չես կարող տեսնել նրան, միայն ու միայն հայելու միջոցով:

Ամեն վայրկյան ավելի եմ համոզվում, որ իրար համար ենք ստեղծված: Մանեն իմ երկրորդ կեսը չէ, նա իմ մի մասն է, իմ ամբողջությունը: Երբ դեռևս ես ու Մանեն ընկերներ էինք, դեռ երեխա ժամանակներս, չէինք ուզում, որ մթներ, որովհետև պետք է գնայինք տուն: Այն ժամանակ ինչ-որ անբացատրելի կախվածություն կար, ուզում էի, որ միշտ կողքիս լիներ, թեև իրար հետ շատ էինք կռվում: Իսկ

հիմա՞... Հենց այն ընկերական կախվածությունն էր, որ սեր ծնեց: Հիմա է արդեն իսկական կախվածությունը: Ինչի մասին էլ որ մտածելիս լինեմ, ուղեղս ասես Մանեի մասին ողջ մտածողությունս առանձնացրել էր մի կիսագնդում, և այդ կիսագունդը այլ թեմաներով չէր ծանրաբեռնում:

Երբեմն մտածում եմ, որ ասենք՝ մի օր էլ գնամ մարտական առաջադրանք կատարելու և չվերադառնամ, ինչպե՞ս կըդասավորվի նրա հետագա կյանքը: Հենց դրանից եմ ահավոր սարսափում: Ու ոչ թե ինձ համար, որ չեմ լինի, այլ Մանեի, որ առանց ինձ նա էլ չի լինի: Ես արդեն ապրում եմ նրա համար: Որոշեցի կատակի վերածելով հարցնել, թե առանց ինձ ինչպես է պատկերացնում իր կյանքը:

-Մանե՛, ի՞նչ ես մտածում, եթե ինձ չճանա-չեիր, կկարողանայի՞ր ուրիշին սիրել:

-Իհարկե, կկարողանայի: Եթե քեզ չճանա-չեի, կփնտրեի քեզ, և դու կլինեիր այն ուրի-շը, ում էլ ես կսիրեի:

-Իսկ մտածե՞լ ես, որ մի օր միգուցե ես կզոհվեմ,- հարցս ցնցեց նրան: Լռեց ահագին ժամանակ, արցունքները հանգիստ սահում էին նրա այտերով:

-Ավո՛, մի՛ ասա, չեմ ուզում, չեմ ու-զում: Չեմ ուզում անգամ մտածել այդ մա-սին: Ինչու՞ պիտի մի օր գա, որ դու չլինես, չէ որ խոստացել ես, որ միշտ ուշադիր կլի-նես, միշտ կվերադառնաս: Դու բերել ես չէ՞, խաղաղություն ես բերել ինձ համար, ճիշտ է, քիչ էր, այն չի բավականացնում, հենց այս պահին էլ, որ խոսում ես զոհվելուց,

ուրեմն խաղաղության կարիքը կա, այն անհրաժեշտություն է: Խնդրում եմ, խոստումդ կպահես:

-Մի հարց էլ և վերջ: Մի պահ պատկերացրու, որ արդեն չկամ: Ի՞նչ ես անելու:

-Չեմ ուզում պատկերացնել: Ամեն ինչ կպատկերացնեմ, միայն ոչ դա: Ուզու՞մ ես պատկերացնեմ, որ ես չկամ: Պատկերացնե՞մ, որ ոչ մեկը չկա աշխարհում, միայն ես ու դու ենք: Խնդրում եմ, չասես այլևս այդպիսի բաներ: Տե՛ս, մենք նշանվել ենք, շուտով կգնանք քո երազանքի հետքերով, այն մեզ է սպասում:

-Որ ես չլինեմ, դու կլինես, խնդրում եմ իմ փոխարեն էլ կապրես, երկնքից էլ լինի, կհետևեմ քեզ, կապրես դու,- լացում էի արդեն, գրկեցի նրան, երկուսս էլ լացում էինք: Արձակուրդիս վերջին օրն այսպիսի

զրույց չէի նախատեսել, բայց այս զրույցը պարտադիր իրականացվող զրույց էի համարում, որովհետև այսպիսի վիճակում ամեն ինչ էլ սպասելի էր: Գոնե ինձնից հետո նա դժվար չտանի, գոնե ապրի, լու՛ռ ապրի:

Արդեն ուշ գիշեր էր: Այդ ծանր թեմայից հետո այլ թեմաներից էլ խոսեցինք, միայն ուրախ թեմաներից՝ միայն կառուցողական ծրագրերով: Խոսեցինք մեր ապագա ընտանիքից, մեր տասը երեխաների անուններից, մեր թոռներից ու ծոռներից: Բայց այդքանից հետո ասացի նաև, որ հաջորդ արձակուրդիս էլ կամուսնանանք: Հաջորդը կարող է նաև մի քիչ ուշ լինի, սակայն ասացի, որ սպասի այդ օրվան, որ պատրաստվի լինել աշխարհի ամենասիրուն ու ամենաերջանիկ հարսիկը:

Խոսելու և քննարկելու թեմաները շատ էին, բայց արդեն ուշ էր, ես էլ հաջորդ օրն աշխատանքի էի: Չէի ցանկանա, որ արձակուրդից հետո առաջին աշխատանքային օրս ուշացած սկսեմ կամ էլ՝ քնաթաթախ: Ամուր-ամուր գրկեցի նրան, ինչպես միշտ ասացի անսահման սիրուս մասին: Նա փոխադարձաբար ոչինչ չպատասխանեց, միայն ասաց այն, ինչը միշտ սպասում եմ, որ կասի, բայց ինչն ասելուց հետո ներսիս փոթորիկն արթնանում էր:

-Ավո՛, խաղաղություն կբերես:

Դրանք էին նրա հրաժեշտի խոսքերը: Բայց կարող էր չէ՞ ասել, որ սիրում է, որ ուրախ է հարսանիքի մասին լուրը լսելիս: Բայց չէ... Միշտ այդ խաղաղության թեման, միշտ այդ ականջ ծակող արտահայտությունը: Սուս ու փուս հեռացա նրա-

նից: Ասես այս հակամարտության ողջ մեղավորությունը ինձ վրա լիներ: Այս անգամ, չգիտես ինչու, նրա խոսքերը ծանր բեռ էին դարձել ուսերիս վրա: Պառկեցի, որ քնեմ, բայց չէր ստացվում: Անընդհատ Մանեի ձայնն էր ականջիս: Որոշել եմ. ինչ գնով էլ լինի՝ կբերեմ այն:

Ժամը գիշերվա երեքն անց էր, երբ հեռախոսս զանգեց: Մի կերպ աչքերս բացեցի, քանի որ ընդամենը երեք ժամ էր, որ քնած էի: Չհասցրի ալո՛ ասել, երբ լսվեց.

-Ավո՛, հանգի՛ստ քնիր, ամեն ինչ նորմալ է:

-Եղավ, հասկացա:

Իսկույն վայրկենական վեր թռա տեղիցս, այնպես հագնվեցի, որ մի պահ չնկատեցի՝ երազո՞ւմ եմ, թե՞ իրական էր

ամեն ինչ, բայց հասկացա, որ իրական էր, քանի որ ձայնիցս մայրս արդեն արթնացել էր և տխուր դեմքով կողքիս կանգնած էր.

-Էլի՞:

-Էլի՛, մա՛մ ջան: Զանգեցին ու կանչեցին՝ որքան հնարավոր է, շուտ գնամ զորամաս:

-Ա՜խր, ա՛յ տղա, խոստացար, որ հաջորդ անգամ այդ անտեր խաղաղությունը կբերես:

-Այս անգամ հաստատ կբերեմ, մա՛: Ես թռա:

Ավելի լավ է շուտ դուրս գայի, քան նորից մորս ստերի ավելի երկար շարանով փաթաթեի: Բայց կբերեմ, այս անգամ հաստատ կբերեմ:

-Ի՞նչ կա, ի՞նչ է եղել,- շնչակտուր հարցրի զորամասի հերթապահից:

-Հիմա վիճակն այլ է՝ լայնամասշտաբ հարձակում սահմանի համարյա ողջ երկայնքով:

-Նստե՛ք, նստե՛ք, մեր այս վիճակում միայն կանգնելով հարգելն էր մնում,- դռնից դեռևս չմտած ասաց հրամանատարը,- երևի տեղյակ եք իրավիճակին, մեզ անհրաժեշտ է մեր կարողությունների մաքսիմալ ներդրում, քանզի այս անգամ մի քիչ այլ է՝ հովիվը ոչխարներին «առա՛ջ» հրաման է տվել:

-Պատրաստ ենք կատարել ցանկացած հրաման,- մեկը մյուսի հետևից ասացին հավաքված սպաները:

-Ավո՛, հերթապահը տեղեկացրեց, որ քաղաքացիական անձիք են հավաքվել զորամասի դիմաց և ցանկանում են կամավորագրվել: Գնա՛ և ասա՛, որ դեռևս այդպիսի հրաման չունենք, երբ որ եղավ, անպայման բոլորին գրկաբաց կընդունենք:

-Լսու՛մ եմ:

Հավաքվել էին քառասունին մոտ մարդիկ՝քսանից վաթսուն տարեկան: Նրանց մեջ էր անգամ Եռոտանին (այստեղ նրան այդպես են ճանաչում, պատերազմի ժամանակ ականի պայթյունից կտրվել էր ոտքը, բայց այդ վիճակում կարողացել էր անգամ դաշտից հանել իր երկու զոհված ընկերներին): Ես ասացի ինչ փոխանցել էր հրամանատարը, իսկ նրանք ասացին, որ գնալու տեղ չունեն, հենց այստեղ էլ կը-

սպասեն այնքան, մինչև ստանան նման հրաման:

Այս ազգին հաղթել չի լինի, համեմատաբար խաղաղ ժամանակներում ամեն մեկն իր գլխի տերն է, իսկ այսպիսի դեպքերում, բոլորը մեկ դարձած, Հայրենիքի տերը:

Դեռևս զորամասում էինք, երբ որ լսվեց քաղաքացիական անձի զոհվելու մասին: Թշնամին այս անգամ փոխել էր մարտավարությունը: Առաջին զարկերը իր վրա զգաց քաղաքացիական բնակչությունը: Աչքիս առաջ եկան հորս պատմած պատմությունները պատերազմի մասին, զոհերի մասին ծանր լուրերի տեղեկացնելը իրենց հարազատներին և այլն: Այդ պատմությունները ասես հորս կողմից պատմված լինեին այն նպատակով, որ հոգեպես պատրաս-

տվեմ այդքանը նաև տեսնելու սեփական աչքերով: Նայում եմ առաջ. Կամավորականներն են առանձին-առանձին խմբերով, մի խումբը «Պիտի գնանք» էր երգում, երկրորդը, իրար գլուխ հավաքված, առաջխաղացման քարտեզ էր գծում, իսկ երրորդ խմբի մարդիկ մյուսներից փոքր-ինչ հեռու, գետնին պառկել և քնել էին՝ երևի մտածելով, որ քանի դիրքեր չեն տարել, քնեն, որ այնտեղ օրերով արթուն մնան:

Ետ եկա շտաբ: Նույն իրավիճակն էլ ներսում էր տիրում: Մի գումարտակ կազմպատրաստ հրամանի էր սպասում, մեկ այլ գումարտակ սնունդն էր տեղափոխում մեքենաների մեջ: Եվ ոչ մի խուճապ, ոչ մի լացուկոծ: Կարելի էր մտածել, որ բոլորն առանձին-առանձին մեկ անգամ անցել էին դրա միջով և գիտեին, թե որ դեպքում ինչպես պետք էր վարվել:

Իսկ շտաբում մենք պատրաստվում էինք առաջիկա ժողովին, որի ժամանակ արդեն պետք է տրվեին կոնկրետ հրամաններ: Այլևս «եթե»-ով առաջ շարժվելու ժամանակ չկա:

Իսկ ես այդ խառը ժամանակամիջոցում հասցրի բոլոր սևագրություններս թղթին հանձնել՝ գրպանումս թողնելով առանձին թղթի պատառիկներ, որոնք դեռևս չեմ որոշել՝ տեղ կգտնե՞ն գրքումս, թե՞ ոչ:

Եկավ ժողովի ժամանակը: Մեր մեջ կային այնպիսի սպաներ, որոնք երկրորդ պատերազմը պետք է տեսնեին, բայց և կային իմ տարեկիցներ, որ պետք է դեռ նոր զգային պատերազմի իսկական շունչը:

Հրամանը տրված էր: Ես դասակիս հետ գնում եմ առաջնագիծ՝ կարևոր խնդիր կատարելու: Այլևս ոչինչ գրելու ժամանակ

չկա: Կշարունակեմ խաղաղությունը բերելուց հետո:

●●●

Անցել էր վեց ամիս: Արդեն համեմատաբար հանգիստ է: Ճիշտ է, այն խաղաղ չի կարելի համարել, բայցևայնպես, դաժան ապրիլի հետ համեմատվելի չէ: Երևի ինձ առանձնակի պետք չէ ներկայացնել: Ես Մանեն եմ, Ավոյի Մանեն: Իսկ թե ինչու եմ ես գրում, հիմա կպատմեմ:

Ավոյի արձակուրդից հետո սկսվեց այդ քառօրյա կոչված պատերազմը, որն ինձ համար դարձավ հավիտենական պատերազմ՝ կռիվ իմ ու աշխարհի միջև: Իսկ այսքանը գրում եմ, որովհետև կուզենայի, որ նրա գոնե այս ցանկությունը և գուցե նաև երազանքը, որը գիրքը հրատարակելու հետ

էր կապված, և որը հնարավոր է ի կատար ածել, կատարվեր:

Ավոն արդեն չկա: Նրա զոհվելու մասին լսեցի շատ պատահաբար: Բոլոր հարևաններով հավաքվել էինք մոտակա թաքստոցում, չգիտես ինչու, ես հետս վերցրի միայն ռադիոն: Այդ պահին չգիտակցելով զգում էի՝ ինձ ոչ մի հագուստ և սնունդ պետք չէր, ինձ նորություն էր պետք, պետք էր լսել, որ ամեն ինչ հանդարտվել է, գոնե հանդարտվել: Միացրի ռադիոն: Հաղորդավարուհին իրար հետևից անուն, ազգանուն, հայրանուններ էր ընթերցում. Կողքից հուշեցին, որ այդ օրվա զոհվածների անուններն են հայտնում: Չպիտի լսեի ես դա՝ Ավո Գարեգինի Մովսիսյան... Այլևս ոչինչ չեմ հիշում: Հետո պատմեցին, որ ասես խլացել էի, լեզուս կուլ էր գնացել: Որոշ ժամանակ աննորմալ շարժումներ էի

անում, շուրջս քայլողների ձայները ուղեղս սղոցում էին: Մի բարձր ձայն էր ինձ ետ բերել այն աշխարհից՝ Ավոյի մոր ձայնը: Չգիտեմ՝ ինչպես մոտեցա նրան, բայց հաստատ հիշում եմ, որ նա ասում էր՝ ո՞ւր է խաղաղությունը, խոստումդ չկատարեցիր, հարսս այրի դարձավ և այլն: Գրկեցի նրան: Դողում էի, ատամներիս կոճտոցը մինչև հիմա ականջումս է:

Ավոյին բերեցին տուն նույն համազգեստով, որով որ տնից էր գնացել: Ներսս դատարկվել էր, ոչ մի արցունք չկաթեց աչքերիցս: Մոտեցա նրան: Նույն Ավոն էր, նույն դեմքը: Տարբեր էր միայն նրա լռությունը: Ես գտնվեմ նրա կողքին, և նա այսքան լու՞ռ մնա: Չեմ ուզում շատ պատմել մեր տանջանքների մասին, քանի որ վերհիշելը նույնպես ծանր է:

Ավոյին հողին հանձնելուց առաջ խնդրեցի, որ գոնե համազգեստը թողնեին ինձ: Նրա բուրմունքի կարիքը ես դեռ շատ կզգամ: Սիրում էի, որ Ավոն համազգեստով էր գալիս մոտս, նրան շատ էր սազում այդ հագուստը: Հիմա ստիպված կլինեմ Ավոյին գրկելու փոխարեն այդ համազգեստը գրկել. այն կդառնա ինձ ու նրան կապող, ցավոք, միակ հանգույցը:

Եկավ ամենադաժան պահը՝ Ավոյի հուղարկավորությունը: Դժվար է բառերով բացատրել, թե ինչ էի զգում: Աչքերիս առաջ միայն սև ու սպիտակ էր: Երրորդ օրն էր՝ հաց չէի կերել, ուստի իմ ֆիզիկական թուլությանը գումարված էր նաև քաղցից զգացվող թուլությունը: Սահմանին դեռևս ամեն ինչ խառն էր: Աշոտը, անտեսելով ցանկացած արգելքի հրաման, գտնվում էր առաջնագծում, ինչի պատճառով, չկարո-

դացավ հրաժեշտի պահին գտնվել այստեղ: Արտասահմանից եկել էր Արմանը, որը տեղ հասավ հուղարկավորության օրը: Թաղման արարողությունից հետո նա կամավորագրվեց և հաջորդ օրն իսկ մեկնեց առաջին գիծ: Դե իսկ Արամն ու Հովոն միշտ իմ ու Ավոյի կողքին էին: Անգամ թաղման ժամանակ նրանք կռվում էին, թե որ մեկն է դագաղից բռնելու: Երկուսն էլ բռնեցին: Երկուսն էլ իրենց ուսերին զգացին Ավոյի մարմնի ծանրությունը: Տիկին Մարինեն մեկ րոպե չհեռացավ Ավոյի մոր կողքից: Ցավոք սրտի, նա այդ հարցում «փորձ» ուներ:

Հովոն և Արամը թաղումից հետո մի քանի օր ևս մնացին իմ կողքին և մի օր եկան հրաժեշտ տալու. հողը նրանց էլ էր կանչում պաշտպանության:

Ավոյի հանդեպ ունեցած կարոտս ստանում էի նրա համազգեստից: Կեղտոտ էր, սակայն երբեք էլ չեմ լվա այն, վախենամ, թե ցեխի հետ ջուրը նաև նրա և հագուստի հպումը տանի: Մի օր, երբ հերթական անգամ, հագուստն իմ դիմաց դրած, անպատասխան զրույց էի տանում, հանկարծ ձեռքս կպավ նրա թևի աջ գրպանին: Հետաքրքիրն այն է, որ այդքան ժամանակ գրպանները չէի փորփրել, չէի ուզում խառնել տիրոջ գրպանային պարագաների դասավորությունը: Բայց այդ անգամն ինձ հանգիստ չտվեց: Մեկ օր, երկու օր, և վերջապես երրորդ օրը որոշեցի բացել գրպանը: Այնտեղ տարբեր թղթերի վրա կային որոշ գրվածքներ: Մի պահ հիշեցի, որ Ավոն ինձ ասել էր գիրք գրելու մասին, որ իր գրքի հերոսն եմ լինելու, բայց նաև ասում էր, որ դեռ վերնագիր չի ընտրել: Այդ

թղթերը վերցրի և արագ վազեցի նրանց տուն: Ինձ թվում է՝ ես գիտեմ, թե որտեղ կլինեն իր՝ դեռևս չտպված գրքի տողերը: Փաստորեն ես չսխալվեցի: Մեր միասին նկարված նկարի հետևում էր դրված այն: Ավոն մի անգամ կարծես ինձ հուշած լիներ, որ ինձ հետ կապված բոլոր հիշողությունները բոլորից թաքուն պահում է հենց այդ նկարի հետևում: Կարդացի: Դժվար է պատկերացնել, թե քանի օր կամ գուցե շաբաթ տևեց լրիվությամբ կարդալս:

Նա գրել էր «կարոտի ժամանակ» արտահայտությունը այն դեպքում, երբ մեր միջև եղած հեռավորությունը չնչին կիլոմետրեր էին: Իսկ իմ «կարոտի ժամանակ»-ը հեռավորություն կամ տարածություն, զգացմունք կամ ցանկություն չի հարցնում:

Իսկ ամուսնանալը... Լոնդոնը. իր մանկական երազանքը: Նրանից հետո վարունգն ու բորշը տանել չեմ կարողանում:

Բայց, որ ամենակարևորն էր, նա ինձ ու իր մորը խաղաղություն էր խոստացել: Մի բուռ խաղաղությունից հետո այս անգամ խաղաղությունը չէր ուզում ոչնչով չափել, ոչ մի ժամանակի մեջ տեղավորել: Բայց նա կբերի, նա դեռ կբերի: Ավոն հավաքական կերպար է: Ավոները չեն պարտվում:

Եվ այդքանից հետո պարզվեց, որ ոչ թե ես եմ իր գրքի հերոսը, այլ հենց ինքն է իր սեփական գրքի հերոսը: Նա նաև իմ կյանքի հերոսն է, իմ խաղաղություն բերողը: Ավոն՝ Մոնթեն, նույնպես խաղաղություն բերելու նպատակով զոհվեց, ճիշտ

ինչպես իմ Ավոն, այն բոլոր Ավոները, որոնք այդպես էլ մինչ այսօր խաղաղություն չբերեցին: Հուսով եմ՝ մի օր կտեսնեմ իրենց սիրո համար վերջնականապես խաղաղություն բերողներին, որովհետև դա ոչ միայն մեր՝ ապրողներիս երազանքն է, այլ նրանց, ովքեր խաղաղություն բերելու հույսով ընկան:

Վերջում գրում եմ նաև այն հատվածները, որոնք դեռևս սևագիր էին և հստակ չէր որոշել՝ տեղ կգտնե՞ն գրքում, թե՞ ոչ:

***

Մանեն երևի չների ինձ, բայց ես նրան հավասար հայրենիքս եմ սիրում: Չեմ

պատկերացնում հայրենիք՝ առանց Մանեի կամ Մանե՝ առանց հայրենիքի:

***

Երբեմն մտածում եմ, որ Մանեն ինձ ավելի շատ է սիրում, որովհետև ժամանակ ունի…Երանի նրան, որ ժամանակ ունի:

***

Խաղաղությո՛ւն, դու ո՞ւր ես կորել,

Ինչո՞ւ ես մեզնից երեսդ թեքել,

Չէ՞ որ ամեն տան, ամեն սեղանի,

Կենացդ պիտի պարտադիր հնչվի:

Պապս հորս էր հավետ պատգամում

Ու պատերազմից դրվագներ պատմում:

Բայց միշտ ասում էր իր խոսքի վերջում՝

Պատերազմ տեսնել որդուն չի ուզում:

Հայրս ճաշակեց համը այդ կռվի,

Ընկերների հետ նա գնաց մարտի:

Երազում էին՝ մոտ ապագայում

Նոր սերունդն ապրի խաղաղ երկնքում:

Մեզ էլ վիճակվեց պատերազմ տեսնել,

Բայց հույս եմ պահում, որ այդ վերջինն էր:

Չեմ ուզում որդուս ես այն ժառանգել,

Ինչ սերնդեսերունդ ինձ է փոխանցվել:

***

Այս թղթերը եթե կարդաք, ուրեմն ես կենդանի չեմ: Մանեին կասեք, որ չգրված գիրքը մեր հիշողությունների պահպանման վայրում է: Թող ընթերցի և իմանա, որ մի օր ես իրեն խաղաղություն կբերեմ: